

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ինչպե՞ս Կեղծուեցան Ընտրութիւնները

450 Հազար «Ֆէյք» Ընտրողները Յաղթանակ Նուիրեցին Իշխող ուժին

ԱՐՏԱԿ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Յիշենք, որ 1990 թ. Հայաստանում պաշտօնապէս ապրում էր աւելի քան 3 միլիոն 700 հազար մարդ. դեռ Խորհրդային Միութիւնը չէր փլուզուել, Ղարաբաղեան պատերազմը չէր սկսուել եւ մասսայական արտագաղթ Հայաստանից չկար: Այսինքն, հենց այդ ժամանակահատուածում, որտեղ շատ բարձր էր մարդկանց քաղաքական ակտիւութիւնը, քանի որ Հայաստանում փոխուում էր հասարակարգ եւ հաստատուում անկախ պետականութիւն, մաքսիմալ ընտրողների թիւը կազմել էր մօտ 1 միլիոն 300 հազար մարդ:

Հինգ տարի անց՝ 1995 թ. Խորհրդարանական ընտրութիւններում քուէարկողների թիւը կազմել է 1 միլիոն 183 հազար մարդ, այսինքն մօտ 100 հազարով պակաս: Այս նուազումը հասկանալի էր, քանզի Ղարաբաղեան պատերազմը եւ ԽՄ փլուզումը մեծ արտագաղթի ալիք էր բարձրացրել Հայաստանում, եւ այդ ժամանակահատուածում Հայաստանից հեռացել էր 400-500 հազար մարդ: 1999 թ. Խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ քուէար-

կողների թիւը կազմել է 1 մլն. 137 հազար մարդ, ինչը համապատասխանում է օրինաչափութեանը: Այսինքն, այդ չորս տարուայ ընթացքում արտագաղթը շարունակուել է եւ ընտրողների թիւը կրճատուել է 50 հազարով: 2003 թ. Խորհրդարանական ընտրութիւններում քուէարկել է 1 միլիոն 188 հազար 256 մարդ՝ մօտ 50 հազարով աւելի շատ: Այստեղ արդէն ընտրութեան տրամաբանութիւնը սկսում է հակասել բանականութեանը, քանի որ 1999-2003 թ. ընկած ժամանակահատուածում Հայաստանում ներգաղթ չի արձանագրուել, ճիշտ հակառակը՝ արտագաղթը շարունակուել է, բայց արի ու տես որ ընտրողների թիւն աւելացել է 50 հազարով:

Յաջորդ՝ 2007 թ. Խորհրդարանական ընտրութիւններում մասնակիցների կազմել է 1 միլիոն 375 հազար 733 մարդ: Այսինքն այն աւելացել է գրեթէ 200 հազարով: Այստեղ էլ տրամաբանութիւն չկայ: Ճիշտ է 2005-07 թթ Հայաստանում առաջին անգամ ներգաղթ է արձանագրուել, սակայն այն կազմել է մօտ 50 հազար մարդ: Մինչդեռ, ընտրողների թիւն աւելացել է 200 հազարով, ինչը յու-

շում է, որ ընտրական պետական կեղծիքի մեքենան առնուազն 200 հազարով աւել ընտրող է արձանագրել:

2012 թ. Խորհրդարանական ընտրութիւններում ընտրողների թիւը կազմել է 1 միլիոն 572 հազար 518 մարդ, այսինքն ընտրողների թիւը աւելացել է կրկին 200 հազարով, եւ դա այն դէպքում, երբ նոյն ժամանակահատուածում պաշտօնական տուեալներով արտագաղթը երկրից կազմել է աւելի քան 130 հազար մարդ:

Եւ վերջապէս, վերջին 2017 թ. Խորհրդարանական ընտրութիւններում կրկին արձանագրուեց ակտիւութեան ռեկորդ 1 միլիոն 575 հազար 382 մարդ: Այսինքն, վերջին 5 տարուայ ընթացքում, պաշտօնական տուեալներով Հայաստանից արտագաղթել է աւելի քան 200 հազար մարդ, իսկ ընտրողների թիւը ոչ միայն չի պակասել, այլ աւելացել է 3000-ով: Այսպիսով, եթէ վերցնենք 1999 թ. Խորհրդարանական ընտրութիւնների ելակէտային թիւը 1 միլիոն 137 հազար, ապա կարող ենք արձանագրել, որ 99 թուականից մինչեւ 2017 թ. Հայաստանում ընտրողների քանակը աւելացել է 450 հազարով, եւ

դա այն դէպքում, որ նոյն ժամանակահատուածում նոյն պաշտօնական տուեալներով Հայաստանից արտագաղթը կազմել է աւելի քան 600 հազար մարդ:

Ըստ էութեան, հենց այստեղ է գտնուում իշխանութեան պարբերաբար յաղթանակի գաղտնիքը, որտեղ 450 հազար քուէ իշխանութիւնը միշտ օդից արձանագրելու է բոլոր պաշտօնական թուերում:

Սա շարքային պետական հանցագործութիւն է, սա պետական յեղաշրջման լեգիտիմ ձեւ է եւ իշխանութիւնը շարժուում է յայտնի գործչի յորդորով՝ «նոյնիսկ եթէ ընդդիմութիւնը 100 տոկոս էլ հաւաքի, միեւնոյն է մենք այս իշխանութիւնն ընդդիմութեանը չենք յանձնի»: Եթէ այդ գործիչն իր թէզը իրականացնում էր Երեւանի փողոցներ տանկեր հանելով, ապա նրա այսօրուայ աշակերտները նոյն բանն անում են առանց տանկերի՝ պարզապէս թուանկարչութեամբ եւ շրջիկ խմբերի աշխատանքի միջոցով: Եւ այդ յայտնի գործչի աշակերտներն այսօր ծաղրում եւ իրենց լկտի պահուածքով յաղթանակ են տանում ժողովրդի հանդէպ, սակայն դա Պիդոսեան յաղթանակ է, քանզի կարելի է թուանկարչութեամբ յաղթանակներ տանել ներքին կեանքում, որը վերածուելու է խոշորամասշտաբ պարտութիւնների երկրի արտաքին, եւ յատկապէս անվտանգութեան ոլորտում: Եւ այդ ենթատեքստում, «առաջընթաց եւ անվտանգութիւն» կարգախօսը գաւեշտալի է հնչում, քանզի այն վերածուելու է «հետզարգացման եւ պարտութիւն» կարգախօսի՝ իրական կեանքում:

«ԺԱՄ»

Սերժ Սարգսեանը Երկու Շաբաթ Ժամանակ Ունի

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՅՐԻՅԵԱՆ

Հայ ազգային կոնգրեսը դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով Ապրիլի 2-ին կայացած Խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքները: Այդ պատճառով, ըստ օրէնսդրութեան, երկու շաբաթով յետաձգուելու են «յետընտրական» գործընթացները՝ կապուած նոր կառավարութեան ձեւաւորման, նոր պատգամաւորների մանդատների բաշխման եւ այլնի հետ:

ՀԱԿ-ն իր դիմումին կցել է նաեւ երկու սկանդալային ձայնագրութիւններ՝ դպրոցների ու մանկապարտէզների տնօրէնների եւ ՍԱՄ-ի աշխատակիցների ժողովի: Ընդ որում, այս վերջին ձայնագրութիւնը կցուեց վերջին պահին՝ ՄԴ դիմելու օրը, քանի որ այդ օրն այն հրապարակուեց ՉԼՄ-ներում:

ՀԱԿ-ի ՄԴ դիմելու որոշումը տեղի է ունենում հետաքրքիր ժամանակ: Բանն այն է, որ ընտրութեանը ամենաշատ ձայներ հաւաքած ուժերը՝ ՀՀԿ-ն ու Ծառուկայան դաշինքը, առայժմ չեն հրապարակել պատգամաւորների ցուցակները, թէեւ մանդատների թիւը յայտնի է վաղուց, եւ ԿԼՅ-ն էլ արձանագրութեամբ հաստատել է վերջնարդիւնքը:

Այս հանգամանքն իհարկէ կապուած չէ ՀԱԿ-ի դիմումի հետ: Այս երկու ուժերում, եւ յատկապէս ՀՀԿ-ում տեղի են ունենում ներքին ինչ որ գործընթացներ, շարքերում անորոշութիւն է, քանի որ Ծառուկեանը եւ Սերժ Սարգսեանն առայժմ վերջնական որոշում չունեն կամ չեն յայտնում այդ որոշման մասին: Աւելի շուտ, թերեւս, չունեն՝ կապուած հենց այդ գործընթացների հետ:

Մամուլում պարբերաբար տեղեկութիւններ են հրապարակուում հնարաւոր կոալիցիաների, վերա-

դասաւորումների ու մանդատների բաշխման վերաբերեալ, եւ ըստ ամենայնի՝ այս գործընթացը ձգձգուում է: Դա բնական է, քանի որ ներկայում անցում է կատարուում Խորհրդարանական կառավարման, այսինքն՝ փոխում է իշխանութեան ձեւաւորման տրամաբանութիւնն ու մտփառացիան: Ընդ որում, սա «մէկանգամեայ» ակտ չէ եւ ընդգրկում է շատ աւելի լայն ինդիւրներ, որոնք կապուած են առաջիկա տասնամեակի ներքաղաքական նոր ստատուս-քոնոյի ձեւաւորման հետ:

Այստեղ ակնյայտօրէն խնդիրներ են առաջացել, քանի որ նոր իրավիճակը ենթադրում է նոր հանգամանքներ ու բարդութիւններ: Ինչպէս ասում են հայ ուստաները՝ գործից գործ է բացուում: Եւ անհրաժեշտ է ժամանակ՝ այդ խնդիրները կարգաւորելու համար: Եւ անհ, ՀԱԿ-ը դիմել է ՄԴ, որը Սերժ Սարգսեանին երկու շաբաթ «սահմանադրական» ժամանակ է տալիս:

Ի՞նչ որոշում է կայացնելու ՄԴ-ն՝ կարծես թէ բոլորի համար պարզ է: Այդ որոշումը մի կողմից «լեգիտիմացնելու» է ընտրութեան արդիւնքը, ինչը խիստ անհրաժեշտ է կառավարման նոր կարգի անցնելու համար, միւս կողմից՝ «սպառելու» է յետընտրական որոշակի նստուածքը: Թէ ՄԴ-ն, թէ իշխանութիւնը եւ թէ յատկապէս ՀԱԿ-ը նման հարուստ փորձ ունեն քաղաքական տարբեր ժամանակաշրջաններում ու հանգամանքներում:

Այնուամենայնիւ, ՄԴ դիմելու հանգամանքն ու Սերժ Սարգսեանի ձգտող լուծութիւնը չեն կարող անհանգստութիւն չառաջացնել իշ-

խանական համակարգում, առաւել եւս, որ ընտրութիւնները չեղեալ համարելու համար հիմքեր այնուամենայնիւ կան՝ ճաշակի ու նախապատուութեան հարց է:

Բացի այդ, Սերժ Սարգսեանը քաղաքական տարբեր հանգրուաններում ցուցադրել է քաղաքական դաշտի այլ խաղացողների միջոցով իրավիճակներ կարգաւորելու եւ երբեմն «սաղորելու» բազմաթիւ օրինակներ ու հմտութիւն: Իշխանական նոր ստատուս քվոյի ձեւաւորման բարդ ժամանակաշրջանում այս երկու շաբաթուայ ընթացքում Սարգսեանն այսպիսով չէզոքացնում է ներիշխանական տարբեր խմբաւորումների հնարաւոր նախաձեռնութիւններն ու ակտիւութիւնը՝ նրանց դնելով սպասման ու տագնապի ծանր ռեժիմում:

Չի բացառուում նաեւ, որ լուծուում է ՀՀԿ-ն «մաքրելու» խնդիրը, առաւել եւս, որ պարբերաբար արտահոսքեր են լինում այլ ձայնագրութիւնների հնարաւոր գոյութեան մասին:

Ներկայում «անիշխանութեան» շրջան է՝ ընտրութիւնը եղել է, բայց իշխանութիւնը դեռ չի ձեւաւորուել: Սա որքանով վտանգաւոր, նոյնքան էլ մեծ պոտենցիալ պարունակող ժամանակաշրջան է: Օրինակ, ոչ միայն ՀՀԿ-ն «մաքրելու», այլեւ այլ ուժերից հնարաւոր «դաւադիրներին» անկիւններից հանելու առումով: Բանն այն է, որ ընտրութեանը մասնակից բոլոր կուսակցութիւնները ստացել են այնքան ձայն, որքան ստացել են, իսկ ՀՀԿ-ն «ստացել» է այնքան, որքան իրեն պէտք էր՝ սա իշխանութեանը տալիս է լայն հնարաւորութիւններ:

«ԼՐԱԳԻՐ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ՂԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱՍԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷԱԶԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հանրային Ընդվզում Չի Լինում Քաղաքական Ուժերի Պատճառով»

Նախընտրական շրջանին տարբեր հաստատություններում աշխատակիցներուն ճնշելու եւ անոնց միջոցառումներ հաւաքագրելու գործընթացը նաեւ կրնայ Երեւանի աւագանիի ընտրութիւններու նախընտրական շրջանին կիրառուել, քանի որ այն միակ ճանապարհն է, որով ՀՀԿ-ն կրնայ յաղթանակ տանել Երեւանի մէջ: «Լրագիրի» հետ գրոյցի ընթացքին նման դիտարկում ըրած է իրաւապաշտպան Արթուր Սաքունցը՝ անդրադառնալով «ՍԱՍ կրուսի» աշխատակիցներու մատով հրապարակուած յայտնի ձայնագրութեան ու այս երեւոյթի տարածման՝ ընտրական շրջանին:

Սաքունցի խօսքով՝ այս դէպքը ոչ թէ բացառութիւն է, այլ օրինաչափութիւն եւ գործելակերպ: Եւ այն պայմանաւորուած է ՀՀԿ-ն՝ իշխանութեան ունենալու փաստով:

«Քանի դեռ ՀՀԿ-ն իշխանութիւն է հանդիսանում, այդ գործելակերպը շարունակուելու է, որովհետեւ դա միակ ձեւն է, որով ՀՀԿ-ն կարող է իր իշխանութիւնը պահպանել» ՀՀԿ-ի մոնոփոլիան բոլոր բնագաւառներուն մէջ կը յաղթահարուի միայն մրցակցութեան արդիւնքով: Իսկ անոր, ըստ Սաքունցի,

քաղաքական ուժերը կրնան հասնել, երբ որ կարենան այդ իրական մրցակցութիւնը ձեւաւորել, ոչ թէ լուծութեան մատնել իշխանութիւններու կողմէ քրէական աշխարհի հետ համագործակցութեան, վարչական միջոցներու կազմակերպուած ու զանգուածային չարաշահման փաստերը:

«Դրանք չեն ստանում հանրային ընդվզում զուտ քաղաքական ուժերի պատճառով: Ձգտող քաղաքական միւլտրոնները կամ կուսակցութիւններն իրենք պէտք է այդ խնդիրները ոչ միայն բարձրաձայնեն, այլ հետամուտ լինեն այդ խնդիրների լուծմանը եւ այդ ուղղութեամբ հանրային մոպիլիզացիա իրականացնեն: Բայց մենք տեսնում ենք հանրային մոպիլիզացիայի բացակայութիւնը եւ աւելի շատ տեսնում ենք լուելեայն համաձայնութիւն ՀՀԿ եւ Սերժ Սարգսեանի կողմից թելադրուած խաղի կանոններին»,- ըսած է ան:

Եւ այս պայմաններուն մէջ, իրաւապաշտպանի խօսքով, որեւէ մէկը իրաւունք չունի ընտրողին դատապարտել: Հանրութեան պէտք է հնարաւորութիւն տրուի՝ գործողութիւններու, ընդվզումներու միջոցառումներու կազմակերպել:

Գագիկ Յարութիւնեանի Ղեկավարած Կառոյցը Վաղուց Ի Վեր Դարձած Է Օրուայ Իշխանութեան Սպասարկուն

«Ժողովուրդ» թերթը կը գրէ, որ «Գոնկրէս-ՀԺԿ» դաշինքը դիմած է Սահմանադրական դատարան՝ պահանջելով չեղեալ յայտարարել 2 Ապրիլին կայացած ԱԺ ընտրութիւններու արդիւնքները: Որպէս ընտրութիւնները անվաւեր յայտարարելու հիմնաւորում դաշինքի իրաւաբանները ներկայացուցած են ազատ կամ քիարտապատութեան սահմանափակումները, քուէարկութեան գաղտնիութեան խախտումները, վարչական միջոցներու չարաշահման դէպքերը եւ այլն: Իսկ որ նման երեւոյթներն ԱԺ այս ընտրութիւններուն համատարած էին, յայտնի է բոլորին. բաւական է միայն նշել, որ ընտրախախտումներու վերաբերեալ ՀՀ գլխաւոր դատախազութեան մօտ յարուցուած քրէական գործերու շարքին էին այնպիսիք, որոնք յարցուած էին քուէարկութեան գաղտնիութիւնը խախտելու համար: Բացի այդ՝ այս դէպքերուն նաեւ ընտրակաշառքի բաժանման

իրենց գեկոյցներուն ու յայտարարութիւններուն մէջ անդրադարձած են միջազգային դիտորդական առաքելութիւններն ու ՀՀ-ի մէջ հաւատարմագրուած օտարերկեայ դեսպանատուները:

Պէտք է նաեւ արձանագրել, որ ՀՀ Սահմանադրական Դատարանի համար վաղուց Ի վեր կարելու չեն, թէ ընտրութիւններու արդիւնքները բողոքարկելու ժամանակ Ի՞նչ փաստեր կը ներկայացուին: ՄԴ-ն, միեւնոյնն է, պիտի մերժէ նաեւ այս դիմումը, անկախ ընտրախախտումներու բովանդակութենէն ու ծաւալներէն, ինչպէս մերժած է նախորդները: Զէ՞ որ Գագիկ Յարութիւնեանի ղեկավարած կառոյցը վաղուց Ի վեր դարձած է օրուայ իշխանութեան սպասարկուն եւ կեղծուած ընտրութիւնները «վաւերացնողը»: Գագիկ Յարութիւնեան այդպէս վարուած է ե՛ւ Լեւոն Տէր-Պետրոսեանի, ե՛ւ Ռոպերթ Քոչարեանի, ե՛ւ հիմա Սերժ Սարգսեանի նախագահութեան օրօք:

ՄԻՊ-ի Խօսքերը Քննադատութեան Արժանացան

Սարի թաղ ուղեւորուած երթի՝ ոչ խաղաղ նպատակներ ունենալու մասին Մարդկային իրաւանց պաշտպանի (ՄԻՊ) յայտարարութեամբ իշխանութիւնները կ'ուզեն արդարացնել ոստիկանական բռնութիւնները՝ մեկնաբանելով Մարդու իրաւունքներու պաշտպանի պնդումը, ըսած է լրագրողներու «Ասպարէզ» ակումբի ղեկավար Լեւոն Բարսեղեանը:

Վերջինս նախորդ տարուայ 29 Յուլիսին անակնկալ կերպով Սարի թաղ շարժած երթի առաջին շարքերուն եղած էր. - «Ակնյայտօրէն իշխանութիւնը չի խափանել սաղրիչների գործողութիւնը, եւ Ի վերջոյ ինքն է յարձակուել ժողովրդի վրայ: Սա ակնյայտ է: Բանակցութիւնները արդիւնք չեն տուել, բանակցողներին տարել-փակել են օրերով, շքաթներով, նոյնիսկ ամիսներով: Երեւի իսկապէս շատ նեղ դրութեան մէջ են դրել թաթոյեանին, ասել են՝ այս այլանդակութիւնները օրինականացնելու եղանակը յայտարարելն է, որ ցոյցը եղել է ոչ խաղաղ»:

Մարդու իրաւունքներու պաշտպան Արման Թաթոյեանը լրագրողներու հետ հանդիպման տեղեկացուցած է, որ յատուկ գեկոյց պատրաստած են 2016-ի յուլիսեան իրադարձութիւններու վերաբերեալ: Նշելով, որ գեկոյցի մէջ առանձին գլուխներ կան ոստիկանական բռնութիւններու մասին՝ Մարդկային իրաւանց պաշտպանը (ՄԻՊ) ընդգծած է, որ քաղաքացիներու երթը Սարի թաղ չէր կրնար խաղաղ նպատակ ունենալ. - «Եթէ երթը ունէր խաղաղ նպատակ, հարց է առաջանում՝ ինչո՞ւ էր դա գնում Սարի թաղի նեղ, կիսամութ փողոցներով, գիշերով»

«Եթէ Երեւանը Դառնայ Ընդդիմադիր Քաղաք, Դա Կարող Է Շատ Լուրջ Քաղաքական Հետեւանքների Բերել

«Ելք» դաշինքի անդամ Ալէն Սիմոնեան երէկ «Ազատութեան» եթերին վրայ յայտնած է, որ քարոզարշաւը պիտի սկսին աւագանիի իրենց թեկնածուներու կողմէ Երեւանի հիմնի կատարման տեսադրովակով:

Ան ըսած է, որ մնացած թեկնածուները դաշինքը գլխաւորող Նիկոլ Փաշինեանէն վատ կ'երգեն, սակայն արդիական միջոցներու շնորհիւ կը կարգաւորեն այդ խնդիրները: Ալէն Սիմոնեան յայտնած է, որ իրենց կարգախօսը պիտի ըլլայ «Երեւան ճան, Ելք կայ»:

Անոր խօսքով՝ այն քաղաքացիները որորնք չեն մասնակցիր ընտրութիւններուն, հիմնական ընդդիմադիր զանգուածն է, որ կը փոշիացնէ իրենց ձայները: Ըստ անոր՝ եթէ իրենք կարենան այդ եւ գումար բաժնելու խնդիրը լուծել, ընտրութիւններուն յաղթելը իրատեսական կ'ըլլայ:

«Պաշտօնապէս յայտարարում եմ՝ բոլոր ընտրատեղամասերում ունենալու ենք առնուազն 2 ներկայացուցիչ՝ Երեւանի 600 ընտրատեղամասերում, գնացէք, քուէարկէք, ձեր ձայնը չի կորի», - ըսած է ան եւ նշած, որ քաղաքացիները ձայն պիտի պահեն եւ ամէն ինչ ընեն, որ յաղթեն:

«Եթէ չառաջիկայ ընտրութիւններում Երեւանցի վաճառեց իր ձայնը, կ'ունենայ նոյն քաղաքապետին, նոյն իրավիճակը: Երեւանի քաղաքապետի ընտրութիւնները շատ կարեւոր են այն առումով, որ Երեւանում կեդրոնացած է ընտրողների մօտ 40 տոկոսը, եւ եթէ դառնում է ընդդիմադիր քաղաք, նա վերադաս չունի, բաւականին լուրջ լիազօրութիւններ ունի, եւ դա կարող է շատ լուրջ քաղաքական հետեւանքների բերել:

Ուստի շատ կարեւոր է, առա-

Մշակոյթի Նախարարը Խօսած Է Օփերայի Մէջ Գաշարան Բանալու Մասին

Մշակոյթի նախարար Արմէն Ամիրեանը վերահաստատած է Սպենդիարեանի անուան օփերայի եւ պալէսթի թատրոնին մէջ ճաշարան բանալու մտադրութիւնը: Այդ մասին նախարարի յայտարարութիւնը, չի չեցնենք, բաւական թէ՛ք քննարկում յարուցած էր մամուլի ու ընկերային ցանցերու մէջ:

«Որեւէ կերպ մեր մտադրութիւնները չի կարող փոխուել: Ես պարզապէս պէտք է կոչ անեմ, որպէսզի մեր հասարակութիւնը իր մտայնութիւնը փոխի, թէ ինչպէս կարելի է վերաբերել ե՛ւ ռեստորանին, ե՛ւ այն ենթակառուցուածքներին, որոնք մենք նախաձեռնում ենք ստեղծել եւ կառուցել օփերային թատրոնում», - լրագրողներու հետ հանդիպման յայտարարած է Մշակոյթի նախարարը: - «Պէտք է վերատեսութեան ենթարկել ռեստորանի հասկացութիւնը մեր մտայնութեան մէջ: Չի կարելի անպայման կապել այն ուտեստների հետ, ինչը բարձրաձայնում են սոցիալական ցանցերում: Ես հասկանում եմ, որ մարդիկ ինչ տեսել են, նա են երեւակայում: Բայց մենք ուզում ենք նոր մշակոյթ բերել նաեւ, այն մշակոյթը, որը մեր իրականութեան մէջ ղեւեւ չկայ, բայց մեր ժողովրդին, մեր հասարակութեանը շատ կարեւոր է եւ պէտք է»:



«Ելք» դաշինքի անդամ Ալէն Սիմոնեան

Չին՝ մասնակցութիւնը եւ երկրորդ՝ լիազօրի, թաղապետի ներկայացուցչի դէմքի առաջ դուռը փակել եւ ասել՝ «Երեւանցի չի վաճառուում»:

Արե՛ք դա, մեզնից պահանջէք», - ըսած է ան: Իսկ հարցին, թէ Նիկոլ Փաշինեան քաղաքապետարանէն ներս պիտի մնայ, ան ըսած է, որ այդ մէկը կ'որոշէ Նիկոլ Փաշինեանը. ամենայն հաւանականութեամբ չի մնար որպէս աւագանի, սակայն իրենք յաղթելու կ'երթան:

Անդրադառնալով «Երկիր Միւրանի» կուսակցութեան հետ համագործակցութեան, ան ըսած է. «Ես բացառում եմ, որ այնպիսի իրավիճակ լինի, որ, ենթադրենք, «Ելք» դաշինքը եւ «Երկիր Միւրանին» կարողանան միասին քաղաքապետի թեկնածու առաջադրել եւ այդ համաձայնութիւնը ձեռք չբերեն: Շատ ողջունում եմ դրական եմ գնահատում Ջարուհի Փոսթանճեանին եւ կարող եմ ասել, որ մեր հակառակորդը իշխանութիւնն է, եւ ոչ մի դէպքում տիկին Փոսթանճեանը չէ եւ վստահ եմ, որ համագործակցութիւն կը լինի», - ըսած է ան:

Նշելով, որ նման սրճարաններ կան, օրինակ, Սիտնիի օփերայի, Փարիզի «Կրանտ-օփերայի», Նիւ Եորքի Մեթրոփոլիթէն օփերայի մէջ՝ Ամիրեան հարց հնչեցուցած է՝ «Մեր հասարակութիւնն արժանի չէ՞ նման միջավայր ունենալուն»:

Գաղտնիք չէ, որ օփերային թատրոն պահելը թանկ հաճույք է, եւ օրերս «Ազատութեան» հետ գրոյցին այս խնդրին անդրադառնալով՝ Երեւանի տիկնիկային թատրոնի տնօրէն Ռուբէն Պապայեան համոզումնք յայտնած էր, որ օփերային թատրոնի մէջ բարձրակարգ ճաշարան կամ սրճարան բանալու մտադրութիւնը կապուած է թատրոններու պետական դրամական նեցուկի նուազեցման հետ:

Պատասխանելով «Ազատութեան» հարցին՝ նախարարը այսօր հերքած է, թէ այս տարի թատրոններու համար կրճատումներ նախատեսուած են, եւ աւելցուցած՝ «Նման ծրագրերը ոչ թէ միտուած են, որպէսզի մենք ռեստորանով կամ այլ հարակից կառուցանելով կարողանանք դրամ վաստակել, այլ ստեղծենք այն մթնոլորտը, որ հանդիսատեսը գնայ ներկայացում դիտելու: Մենք պէտք է ներկայացումներով կարողանանք դրամ վաստակել»:

ԼՈՒՐԵՐ

Ատրպեյճանի Մէջ Լայնածաւալ Զօրավարժութիւններ Կ'ընթանան

Ատրպեյճանի պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդած է, որ զօրավարժութիւններուն կը մասնակցին 30 հազար զինծառայող, 250 թանկ եւ զրահամեքենա, հրթիռահրետանային 200 համակարգ, մարտական 25 ինքնաթիռներ, անօդաչու թռչող սարքեր: Կիրակի օրը մեկնարկած զօրավարժութիւնները պիտի շարունակուին հինգ օր եւ աւարտին 21 Ապրիլին:

Զօրավարժութիւնները կ'իրականացուին բարդ պայմաններու մէջ մարտ մղելու սցենարով: Հրթիռային եւ հրետանային համակարգերը դուրս բերուած են կրակային դիրքեր, ստեղծուած են գրոհային խումբեր, վերատեղակայուած են ստորաբաժանումներն ու հրամանատարային կէտերը:

Երկրի պաշտպանութեան նախարարութեան հարորդագրութեան մէջ նշուած է, որ լայնածաւալ զօրավարժութիւններու նպատակն է՝ ստուգել զօրքերու մարտական պատրաստուածութիւնը, կազմակերպել զինուած ուժերու կառավարումն ու փոխզօրօժակցութիւնը՝

գործողութիւնները մօտեցնելով մարտական իրավիճակի պայմաններուն:

Ռուսական «Russia Today» հեռուստաընկերութիւնը օրերս հաղորդում հեռարձակած է ատրպեյճանական բանակի մասին, նշելով որ Ատրպեյճանի բանակը տարածաշրջանին մէջ «ամենահարուստն է»: 90-ականներու համեմատ, Ատրպեյճանի ռազմական պիւտճէն 20 անգամ աւելցած է: 2003 թուականին Ատրպեյճանի ռազմական պիւտճէն 160 միլիոն տոլար էր, իսկ տաս տարի անց, 2013 թուականին, արդէն 3 միլիարդ 700 միլիոն տոլար:

Աշխարհի երկիրներու զինուած ուժերու ուսումնասիրութեամբ զբաղուող «Global Firepower» կայքի 2016 թուականի զեկոյցին մէջ աշխարհի 126 երկիրներու շարքին Ատրպեյճանը 60-րդ տեղը կը գրաւէ, 34 կէտով ետ թողելով Հայաստանը: Հայաստանը իր բանակի հզօրութեան ցուցանիշով այդ զեկոյցին մէջ զբաղեցուցած է 94-րդ հորիզոնականը:

Հայաստանը ամենէն շատ կը հետաքրքրէ Իրանի, Ռուսաստանի, Չինաստանի եւ Գերմանիոյ զբօսաշրջիկներուն



Իրանցի զբօսաշրջիկներ Երեւանի մէջ

Այս տարուայ առաջին եռամսեակին Հայաստան այցելած է 599 հազար 341 զբօսաշրջիկ, ինչը 18,2 տոկոսով աւելի է 2016 թուականի նոյն ժամանակահատուածի համեմատ: «Արմէնբիրեսի» հաղորդմամբ՝ լրագրողներու հետ հանդիպման ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարարութեան Զբօսաշրջութեան պետական կոմիտէի նախագահ Զարմինէ Զէյթունցեան ըսած է, որ դէպի Հայաստան հիմնական հոսքը ապահոված է իրանի շուկան՝ 17,7 տոկոս: «Երկրորդ տեղում Ռուսաստանն է՝ 7,5 տոկոսով, յաջորդ երկրները Չինաստանը, Գերմանիան եւ Ֆրանսիան են», - ըսած է Զէյթունցեանը: Անոր խօսքով՝ վրաստանը Հայաստանի համար եւս կրնայ շատ հետաքրքիր շուկայ ըլլալ, սակայն այդ ուղղութեամբ դեռ շատ ընելիքներ կան: «Եթէ մենք ուզում ենք Հայաստանն աւելի գրաւիչ դարձնել

վրացի զբօսաշրջիկի համար, պէտք է կարողանանք մարքեթինկային յստակ քաղաքականութիւն վարել: Վրացի զբօսաշրջիկին Հայաստանում աւելի շատ կարող է հետաքրքրել միջոցառումային զբօսաշրջութիւնը», - աւելցուցած է Զէյթունցեան:

Հայաստանի մէջ իրանցի զբօսաշրջիկներու աշխուժութիւն հիմնական կը նկատուի 15 Մարտին 4 Ապրիլ ինկած ժամանակահատուածին՝ Նովրուզի օրերուն: «Զուարթնոց» օդակայանը այս տարի ընդունած է իրանի իսլամական Հանրապետութիւնէն դէպի Հայաստանի Հանրապետութիւն ժամանած 8100 ուղեւոր: Այս տարի իրանցի զբօսաշրջիկներու համար մեծ աշխատանք կատարուած է տեղեկատուական առումով. իրանցիներու համար Նովրուզի օրերուն գործած է թէ՛ գիծ՝ պարսկերէն լեզուով, անոնց բաժանուած են տեղեկատուական պատահուներ եւ այլն:

Թրքական Ընդդիմութիւնը Կը Վիճարկէ Հանրաքուէի Արդիւնքները



Պոլսոյ մջ ցուցարարներ կը բողոքեն հանրաքուէի արդիւնքներուն դէմ

Թուրքիոյ ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցութիւնը յայտարարած է, որ Ապրիլ 16-ին տեղի ունեցած սահմանադրական հանրաքուէի արդիւնքները իրական պատկերը չեն արտացոլեր, քանի որ քաղաքացիներու առնուազն 50 տոկոսը «ոչ» ըսած է նոր Սահմանադրութեան: Նախնական արդիւնքներու համաձայն, Թուրքիոյ քաղաքացիներու 51,4 տոկոսը քուէարկած է «այո»-ի, իսկ 48,6 տոկոսը՝ «ոչ»-ի օգտին: Հանրաքուէին մասնակցած է քուէարկելու իրաւունք ունեցողներու աւելի քան 85 տոկոսը՝ շուրջ 50 միլիոն քաղաքացի:

Ընդդիմութեան առաջնորդ Քէմալ Քըլըճտարօղլուն յայտարարած է, որ պիտի պահանջեն ձայներու շուրջ 60 տոկոսի վերահաշուարկ: Ընդդիմութեան զխաւոր առարկութիւնը Գերագոյն ընտրական յանձնաժողովի որոշումն է, որու համաձայն, ընտրական յանձնաժողովներու կողմէ չկնքուած քուէաթերթիկները եւս վաւեր համարուած են:

Ի պատասխան, Գերագոյն ընտրական յանձնաժողովի նախագահ Սատի Կիւլփէն յայտարարած է, թէ նման որոշում եղած է նաեւ նա-

խորդ ընտրութիւններու ժամանակ, եւ արդար չէր ըլլար թեխնիքական անփութութեան պատճառով անվաւեր ճանչնալ քաղաքացիներու ձայները:

«Անատոլու» գործակալութեան հաղորդմամբ՝ սահմանադրական հանրաքուէի վերջնական արդիւնքները պիտի ամփոփուին 11-12 օրէն: Մինչ այդ, սահմանադրական փոփոխութիւնները նախաձեռնած՝ իշխող «Արդարութիւն եւ զարգացում» ինչպէս նաեւ նոր Սահմանադրութեան կողմնակից «Ազգայնական շարժում» կուսակցութիւնները կը տօնեն իրենց յաղթանակը: Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան, ելոյթ ունենալով իր համակիրներու առջեւ, յայտարարած է, թէ 16 Ապրիլը «ոչ Թուրքիոյ յաղթանակն է»:

Արեւմուտքը «մտահոգիչ» համարած է Թուրքիոյ մէջ տեղի ունեցած հանրաքուէի արդիւնքները: «Հանրաքուէն չէր համապատասխաներ Եւրոպայի խորհուրդի չափանիշներուն», - Անգարայի մէջ տեղի ունեցած ասուլիսին յայտարարած է Եւրոպայի խորհուրդի խորհրդական անդամ Վեստրոյլի դիտորդական անաքելութեան դեկավար Սէզար Ֆլորին Պրետան:

Թուրքիոյ Հայ Համայնքը Հիմնական «Ոչ» Քուէարկած է

Թուրքիոյ մէջ իրականացուած սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէն ոչ մէկ կերպ կարելի չէ բարեփոխում անուանել: «Արմէնբրես»-ի հետ զրոյցին նման կարծիք յայտնած է Պոլսոյ «Ակոս» շաբաթաթերթի հայերէն բաժնի զխաւոր խմբագիր Բագրատ Էսթուքեանը՝ աւելցնելով, որ հանրաքուէի արդիւնքով նախագահը միահեծան իշխանութիւն պիտի ունենայ:

«Այս ամէնի արդիւնքը պիտի ըլլայ այն, որ Թուրքիոյ մէջ բռնապետական իշխանութիւն պիտի հաստատուի, ուստի որեւէ կերպ սահմանադրական հանրաքուէն բարեփոխում կարելի չէ անուանել», - ըսած է ան:

Բագրատ Էսթուքեան նշած է, որ Թուրքիոյ հայ համայնքը դէմ արտայայտուած է սահմանադրական փոփոխութիւններուն, եւ բոլորը «ոչ» քուէարկած են: «Բայց, ցաւօք, «այո»-ն յաղթեց, ինչը սպասելի էր: Այս ամէնէն ետք երկրի մէջ քաղաքական իրավիճակը աւելի բարդ պիտի ըլլայ», - նշած է «Ակոս» շաբաթաթերթի հայերէն բաժնի զխաւոր խմբագիրը:

Հարցին, թէ ինչ է պատճառը, որ Թուրքիոյ մեծ քաղաքներուն մէջ ընտրողները հիմնական դէմ արտայայտուած են սահմանադրական փոփոխութիւններուն, Էսթուքեան պա-



«Ակոս»-ի հայերէն բաժնի խմբագիր Բագրատ Էսթուքեան

տասխանած է, որ հիմնական պատճառը այն է, որ Թուրքիան միատարր պետութիւն չէ: «Թուրքիոյ մէջ կան ազգային փոքրամասնութիւններ, տարբեր կրօնական դաւանանք ունեցող մարդիկ: Օրինակ Տէրսիմի մէջ, որ հիմնական ալեւիներով բնակեցուած քաղաք է, 80 տոկոսով յաղթած է «ոչ»-ը: Եւ ընդհանրապէս Թուրքիոյ քրիստոնէայ բնակչութիւնը հիմնական դէմ արտայայտուած է առաջարկուող փոփոխութիւններուն: Այսպէս կարելի է բացատրել Թուրքիոյ տարբեր տարածքներուն մէջ քուէարկութեան տարբերութիւնները», - եզրափակած է Բագրատ Էսթուքեան:

ԵՈՒՐԻ ԽԱՀԱՏՈՒՐՈՎՐ ԵՂԱՆԱԿՈՒԱԾ Է ԶԱՊԿ ԳԼԽԱՆՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) գլխաւոր քարտուղարի պաշտօնը 2017-ի 2 Մայիսէն պիտի ստանձնէ ԵՈՒՐԻ ԽԱՀԱՏՈՒՐՈՎՐ: Այս մասին հաղորդած է «ՌԻԱ Նովոսթի»-ն վկայակոչելով կազմակերպութեան գլխաւոր քարտուղարի պաշտօնակատար Վալերի Սեմերիկովին:



ԶԱՊԿ ԳԼԽԱՆՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԵՈՒՐԻ ԽԱՀԱՏՈՒՐՈՎ

«Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան գլխաւոր քարտուղարի նշանակելու հարցը քննարկելու ժամանակ որոշում ընդունուած է 2 Մայիսէն աչք պաշտօնին նշանակել Խաչատուրով ԵՈՒՐԻ ԳՐԻԳՈՐԵԼԻՅԸ», - լրագրողներուն ըսած է Սեմերիկով՝ ամփոփելով ՀԱՊԿ ոչ պաշտօնակազմի գազաթնաժողովը:

Ան նաև յայտնած է, որ պետութեան ղեկավարները որոշում ընդունած են ՀԱՊԿ նախկին գլխաւոր քարտուղար Նիկոլայ Պորտիլժային պարգևատրել ՀԱՊԿ հաւաքական անվտանգութեան խորհուրդի գերագանցութեան աստիճանի նշանով:

Անոր խօսքով՝ ոչ պաշտօնական գազաթնաժողովի ընթացքին ՀԱՊԿ անդամ երկիրներու նախագահները քննարկած են «ՀԱՊԿ-ի պատասխանատուութեան ներքոյ գտնուող ռազմաքաղաքական ու

ռազմամարտավարական հանգամանքներու շուրջ հարցերն ու շարք մը լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկած՝ անվտանգութեան սպառնալիքներուն հակազդելու հետ կապուած»:

Նշենք, որ ԵՈՒՐԻ ԽԱՀԱՏՈՒՐՈՎՐ 2008-2016 թուականներուն եղած է ՀՀ Զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետ: Իսկ 2016-ի Հոկտեմբերին նշանակուած է Ազգային անվտանգութեան խորհուրդի քարտուղար:

ՇԵՐԸ ՅՈՐԴՈՐԱԾ Է ՄԻԱԳԵԱՂ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՄՆ-ԻՆ ԳԱՆՃՆԱՂ ԴՅՈՅ ԶԵՂԱՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Աշխարհահռչակ երգչուհի ՇԵՐ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻՅՈՂ կառավարութեան կողմէն ղեկավարուած Զայոց ցեղասպանութիւնը:

ՇԵՐԸ նշած է, որ Միացեալ Նահանգներու եւ Մեծ Բրիտանիոյ կառավարութիւնները չեն ճանչնար ցեղասպանութիւնը, քանի որ Հայաստան ոչինչ ունի անոնց տալու», - կը գրէ barrheadnews.com-ը:

«Մենք փոքր ենք: Հայաստանը դէպի ծով ելք չունի: Մենք քարիւղ չունինք: Մենք անոնց տալու ոչինչ ունինք: Որքա՞ն ժամանակ պէտք է՝ Յեղասպանու-

թիւնը ճանչնալու համար», - «Խոստումը» ֆիլմի ցուցադրութեան ժամանակ Press Association-ի հետ զրոյցի ընթացքին ըսած է ՇԵՐԸ:

Երգչուհին նշած է, որ հայերը ոչինչ ունին՝ այս երկրները հետաքրքրելու համար:

Պատասխանելով հարցումին, յոյս ունի՞, որ Տանըլտ Թրամը կը ճանչնայ ցեղասպանութիւնը, ՇԵՐԸ ըսած է. «Ո՛չ»:

Նախօրէին երգչուհին Լոս Անձելոսի մէջ մասնակցած է Հայոց ցեղասպանութեան մասին պատմող «Խոստումը» ֆիլմի ցուցադրութեան:

ԴՅՈՅ ԵՂԱՆԱԿՈՒԱԾ Է ԼՐԱԳՐՈՂ ԱԼԻ ՊԱՅՐԱՄՕՂՈՒ ՊՈՂՏՈՅ ՄԵՋ ՅԱՐԾԱԿԻՄԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԼ

Իր հայամէտ հայացքներով յայտնի հրապարակախօս ԱԼԻ ՊԱՅՐԱՄՕՂՈՒ աչօր յարձակման ենթարկուած է: Այս մասին լուրը կը փոխանցէ «Հիւրերիցէթ» պարբերականը: Աղբիւրը կը նշէ, որ Պայրամօղլու, ուղղուելով Պոլսոյ «Սայիր Նէտիմ» վարժարանի ընտրատեղամաս եւ կատարելէ ետք իր քուէարկութիւնը յարձակման ենթարկուած է: 30-է աւելի անձեր լուտանքներ եւ հայհոյանքներ տեղացուցած են անոր դէմ յայտարարելով, որ ան «ղաւաճան» մըն է:



Ղուրջ ամիս մը առաջ այցելած էր Երեւան եւ մասնակցութիւն բերած Ֆրանսայի դեսպանատան կողմէ կազմակերպուած «Հայ-թրքական յարաբերութիւններ» ընդհանուր խորագիրը կրող սեմինարի մը: Ալի Պայրամօղլու կը համարուի սահմանադրական բարեփոխումներուն «Ո՛չ» ըսող գործիչ մը:

Պայրամօղլու, որ երկար տարիներ աշխատակցած է «Ենի Շաֆաք» պարբերականին մօտիկ անցեալի կարեւոր դիրք կը զբաղէր իշխող AKP կուսակցութեան «մտաւորական վերնախաւ»ին մէջ յայտնի է, նախկին վարչապետ Ահմատ Տաւութօղլուին մօտիկ անձնաւորութիւն մը ըլլալու հանգամանքով:

Յիշեցնենք, որ Պայրամօղլու

ՍԱՄԱՆՔԱ ՓԱՈՒՐՐ ՄԻԱԳԱԾ Է «ԽՈՍՏՈՒՄ» ՖԻԼՄԻ ԱՇԿԱԿՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՂԱՐԶԱԼԻՆ

ՄԱԿ-ի մօտ ԱՄՆ-ի նախկին դեսպան Սամանթա Փաուլըր միացած է #KeepThePromise քարոզարշաւին՝ աշակցութիւն Հայոց Յեղասպանութեան մասին պատմող «Խոստում» ֆիլմին:



«Իմ անունը Սամանթա Փաուլըր է, եւ ես կ'երգում, որ կը պահեմ խոստումս՝ մարդու իրաւունքներու ջատագով ըլլալու համար», - ըսուած է Փաուլըրի տեսահաղորդագրութեան մէջ:

Նշենք, որ «Խոստում» ֆիլմի շնորհահանդէսը ամերիկեան շարժանկարի սրահներուն մէջ տեղի պիտի ունենայ 21 ապրիլին: Շատ յայտնիներ, ինչպէս՝ ՇԵՐԸ, ԷԼԹԸ ձոնը, Ռայան Հոսթինկը, ձորձ եւ Ամալ Քլունինները, Լեոնարտո Տի-Քափրիօն, Պարպարա Սթրէյզանտը աշակցած են #KeepThePromise քարոզարշաւին՝ ընդդէմ Յեղաս-

պանութեան ժխտման: Ֆիլմէն ստացուած եկամուտները պիտի փոխանցուին ոչ կառավարական կազմակերպութիւններուն:

Human Rights Watch. ԾՆՈՐԻԱԿԱԼՈՒԹԻՒՆ «ԽՈՍՏՈՒՄ» ՖԻԼՄԻՆ

Human Rights Watch իրաւապաշտպան կազմակերպութիւնը երախտագիտութիւն յայտնած է Հայոց ցեղասպանութեան մասին պատմող «Խոստում» ֆիլմը ստեղծողներուն:

Յիշեցնենք, որ «Խոստում» ֆիլմը ԱՄՆ-ի մէջ մեծ պատասաւին պիտի բարձրանայ 21 Ապրիլին:

«Ծնորհակալութիւն էրիկ Իսրայէլեանին եւ «Խոստում» ֆիլմին՝ ամենասարսափելի յանցագործութեան դէմ պայքարին մէջ Human Rights Watch-ի աշխատանքներուն աջակցելու համար», - ըսուած է կազմակերպութեան միջբրոպրիւրին մէջ:

Ֆիլմին մէջ նկարահանուած են Քրիսթիան Պէյլը, Օսքար Այզէքը եւ Շարլոթ Լը Պոնը:

ԹՐԱՄՓԻ ԾԱԽԱՏՈՒՐՔԵՐՈՒ ԴՅՈՅ ԵՂԱՆԱԿՈՒԱԾ Է ԼՐԱԳՐՈՂ ԱԼԻ ՊԱՅՐԱՄՕՂՈՒ ՊՈՂՏՈՅ ՄԵՋ ՅԱՐԾԱԿԻՄԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԼ

Անցնող շաբաթավերջը քաղաքական իւրաքանչիւր ցոյցերով յատկանշուեցաւ ԱՄՆի շատ մը քաղաքներու, ինչպէս նաեւ Լոս Անձելոսի մէջ: Արդարեւ, տասնեակ քաղաքներու ցուցարարները նախագահ Թրամփին կը պահանջէին հրապարակաւ յայտարարել իր ներմուծած շահատուրքերը: Անոնք կ'ըսէին թէ ամերիկացիները արժանի են իմանալու թէ իրենց նախագահի պիզնէսը ինչպիսի տարրողութեամբ անձնական շահերու բախում ունի (conflict of interest):

Թրամփը անցնող քառասուն տարիներու կուսակցութեան թեկնածուներէն առաջինն է որ իր շահատուրքերու փոխանցումը ցարդ չէ յայտարարած: Սկիզբները ինք ըսած է որ պատճառը այդ հարցի հետաքննութիւնն էր, սակայն յետոյ ըսած է «քուէարկողները կարեւորութիւն չեն տար»...:

«Մենք կարեւորութիւն կու տանք: Կ'ուզենք տեսնել իր հարկերը (taxes)» ըսաւ Ան Տէմէրլիսը, որ ֆիլատելֆիոյ քաղաքապետարանէն մինչեւ Անկախութեան Սրահ երկարող ցոյցի մաս կը կազմէր: Քայլարշաւի մասնակիցները ցուցանակներ կը կրէին հետեւեալ վերտառութեամբ «Հիմա կ'ուզենք

Ցոյցերու կազմակերպիչներու հաղորդագրութեան համաձայն նման քայլարշաւներ տեղի ունեցած են 150 քաղաքներու մէջ:

Իմանալ շահատուրքերը»: Բազմահազար ցուցարարներ երթ մը կազմած էին Լոս Անձելոսը քաղաքամէջի «Փըրշինկ» հրապարակէն մինչեւ քաղաքապետարանի շէնքը: Անոնց ցուցանակներէն

մէկուն վրայ գրուած էր «Ապացուցէ որ թաքնուած բան մը չունիս», «Եթէ 1040 չկայ, խաղաղութիւն չկայ», «Ես կը վճարեմ քու կողքի շրջապատը ցուցադրուող համար, իսկ դուն»:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատգամը Ա. Յարութեան Տօնի Առիթով

«Ձի կեանս յաւիտեանական ետ մեզ Աստուած, եւ այս եմ կեանքն, որ յՈրդին Նորա եմ» (Ա Յովհ. Ե 11)


Միրելի բարեպաշտ ժողովուրդ,

Մեծ Պահջի օրերի խոկումներով ու խորհրդով, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի չարչարանքների ու խաչելութեան իրադարձութիւնների ապրումներով այսօր հասել ենք Փրկչի հրաշափառ Յարութեան լուսափայլ օրուան, որը սօնում ենք հոգու բերկրանքով ու խնդութեամբ: Արդարեւ, անասման է ուրախութիւնը այսօր մեր հոգիներում, քանզի Քրիստոսի Յարութեամբ մահը խորտակուեց, եւ մարդկանց տրուեց պարգեւը յաւիտեանական կեանքի, երկնքի արքայութեան: «Աստուած յաւիտեանական կեանք տուեց մեզ. եւ այդ այն կեանքն է, որ Նրա Որդու մէջ է»: Յովհաննէս առաքեալի այս խօսքերով Մեր պատգամն ենք բերում ձեզ, սիրելի հաւատացեալներ, որ հաւաքուած էք Մայր Տաճարում եւ համայն մեր ժողովրդին՝ ի հայրենիս եւ ի սփիւռս:

Արդէն բացուած են մեր եկեղեցիների սուրբ խորանների վարագոյրները խորհրդանշելով, որ բաց են յաւիտեանութեան դռները: Հնչում է աւետիսը Փրկչի Յարութեան՝ ազդարարելով, թէ ամեն ոք, ով ունի փափագը, քաղցն ու ծարաւը երկնքի արքայութեան, կարող է ժառանգել՝ ընդունելով այն կեանքը, որ Քրիստոսի մէջ է:

Քրիստոսի Յարութեամբ մարդուն տրուել է գօրութիւնը յարուցեալ կեանքի, մեղքն ու չարիքը վանելու, իր նմանի հանդէպ սիրով ու ողորմածութեամբ երկրային կեանքը լցնելու երկնային օրհնութեամբ եւ շնորհներով, երկնային արքայութեան պատկերը հաստատելու աշխարհում, որտեղ թագաւորում են արդարութիւնն ու ճշմարտութիւնը, առատանում խաղաղութիւնն ու խնդութիւնը: Քրիստոսի պարգեւած յարուցեալ կեանքի մէջ չկան տաճնապներ, չկան բռնութիւնն ու պատերազմներ, աղքատութիւնն ու թշուառութիւններ, չկան տարաբնոյթ մոլութիւններ, որոնք ցաւ ու տառապանք են պատճառում մարդկանց, օտարացնում միմեանցից, բեւեռացնում հասարակութիւնները, ծնում աղէտներ: Այս ամենը, սակայն, շարունակում են մնալ աշխարհի կեանքում, քանզի մարդկային սրտերը ջանախ սիրուց պարպուած, շահամոլութիւնից կարծրացած ու անձնակենտրոն՝ անարձապանք են մնում յարուցեալ նոր կեանքի կոչին: Մինչդեռ խաչելութիւնները յարութեամբ պսակելու, դժուարութիւններից ու նեղութիւններից վշտերից ու չարչարանքներից յառնելու ուղին քրիստոսակենտրոն կեանքն է, որ խաղաղարար ոգով, բարի գործերով, բարեպաշտ ընթացքով առաքեալի խօսքի համաձայն՝ առաջնորդում է դէպի յաւիտեանութիւն. «Աստուած յաւիտեանական կեանք տուեց մեզ. եւ այդ այն կեանքն է, որ Նրա Որդու մէջ է»:

Միրելի բարեպաշտ ժողովուրդ, երկրային այս կեանքը տրուած է մեզ որպէս ժամանակ Աստուծոյ փրկարար կամքի վկայութիւնը բերելու, Աստուծոյ պատուիրաններն ու պատգամները իրագործելու մեր իրականութեան մէջ, մեր ընտանիքներում, մեր երկրում, մեզ շրջապատող աշխար-



հում: Մեր կեանքը արժէք ու բովանդակութիւն է ստանում Քրիստոսի մահուան ու Յարութեան խորհրդի լոյսի ներքոյ: Պողոս առաքեալը ուսուցանում է ասելով. «Եւ նա մեռաւ բոլորի համար, որպէսզի նրանք, որ կենդանի են, միայն իրենց համար կենդանի չլինեն, այլեւ Նրա համար, ով մեռաւ եւ յարութիւն առաւ իրենց համար» (Բ Կորնթ. Ե 15): Ապրել Քրիստոսով եւ Քրիստոսի համար, ահա այս է փրկարար ուղին մեր կեանքի, հիմքը, պայմանն ու երաշխիքը՝ թէ որպէս անհատ, եւ թէ որպէս հաւաքականութիւն, մեր հոգեւոր աճի ու զօրացման, նաեւ՝ մեր հայրենիքի առաջընթացի ու զարգացման, աշխարհասփիւռ մեր ժողովրդի բարօրութեան ու լուսաւոր գալիքի:

Այսօր բազմաթիւ խնդիրների առջեւ է կանգնած մեր երկիրը, մեր սահմաններում անկայուն է խաղաղութիւնը, տակաւին յաղթահարուած չեն աղքատութիւնն ու գործազրկութիւնը, հրամայական է արտագաղթի կանխումը եւ մեր ժողովրդի գաւակների դարձը դէպի հայրենիք: Յանդիման այս մարտահրաւէրների՝ մեր ժողովուրդն ունի վսեմ յատկանիշները հայրենանուիրումի, ազգասիրութեան, ընտանիքի նուիրականութեան, ծնողի հանդէպ սիրոյ, ունի յանձնառութիւն գոհողութիւններին՝ յանուն իր սրբազան արժէքների. եւ մենք ի գօրու ենք անառիկ պահելու հայրենի սահմանները, բարօր ու բարգաւաճ դարձնելու մեր երկիրը, բացառելու ազգային մեր կեանքից բոլոր տաճնապներն ու ցնցումները: Մեր կեանքի ընթացքը, մեր կենսակերպը մեզ ոչ թէ պիտի ջլատի, պառակտի, այլ՝ միաւորի եւ դարձնի համախումբ՝ դիմագրաւելու համար մեր կեանքի մարտահրաւէրներն ու փորձութիւնները եւ լաւատեսութեամբ իրականութիւն դարձնելու ազգային մեր տեսիլքները: Մենք Քրիստոսի ժողովուրդ ենք, մեր հաւատը, որ Քրիստոս յարութիւն է առել, անյուսութիւնը փոխում է յոյսի, տկարութիւնը՝ ուժի, անտարբերութիւնը՝ նախանձախնդրութեան, արծաթսիրութիւնը՝ բարեգործութեան, եւ ծառայութեանն ու աշխատանքին միախառնում է նուիրումի ու յանձնառութեան ոգին: Այս փոխակերպութեանն ենք կոչուած, որով միայն կարող ենք անկորուստ պահել մեր երկիրն ու ազգային կեանքը եւ յաղթանակներ արձանագրել մեր ժողովրդի ու հայրենիքի բարօրու-

Առաջնորդ Սրբազան Զօր Սուրբ Չատկուան Պատգամը

Յարեալ Քրիստոս

Քրիստոսի Յարութիւնը մարդկութեան կեանքը յեղաշրջող ճշմարտութիւն է: Իր հրաշալի Յարութեան խորհուրդը ապրող անհատ քրիստոնեան կամ հաւաքականութիւնը իր մէջ կ'ապրի նոր կեանքը, ստեղծագործելու ոգին, եւ ամենէն էականը՝ յաւիտեանականութեան զգացողութիւնը:

Քրիստոսի Յարութիւնը անցեալ չէ, այլեւ՝ ներկայ, որուն ապրումն ու գիտակցութիւնը կ'ունենանք հաւատքով: Ժողովուրդներ, Յարութեան խորհուրդին առաջնորդութեամբ կեանք են իմաստաւորած, պատմութիւն կերտած, մշակոյթ ստեղծած եւ նոյն խորհուրդի առջեւ խոնարհուածով նահատակներ տուած, որոնց արեան հեղուկովը հաստատուած է եկեղեցին:

Յարութեան խորհուրդը մեր ազգի նախնեաց եւ այսօր մեր գաւակաց համար կեանքի խորհուրդն է: Նույն խորհուրդին առջեւ խոնարհած մէկուկէս միլիոն նահատակներ մեր մէջ տեսան տեսիլքը նոր արշալոյսներու, Մեծ Երազը՝ վերանկախացեալ Հայաստանի:

Յարեալ Քրիստոս:

Հաւատացեալը երբ ջերմ սրտով կը յայտարարէ Քրիստոսի Յարութիւնը անտարակոյս իր հոգին ձայն է, որ կեւարձագանգէ, որն ուրիշ բան չէ, եթէ ոչ իր հաւատքը Աստուծոյ հանդէպ, քրիստոնէական կեանքով մը ապրելու իր խոստումը եւ դառնալու նմանա՝ նակից Քրիստոսի:

Յարուցեալ Քրիստոսը Եւ Յարուցեալները

Եթէ Քրիստոսի կցորդ եղանք՝ Իրեմ պէս մեռնելով, նոյնպէս Իրեմ կցորդ պիտի ըլլանք, Իրեմ հետ յարութիւն առնելով (Չոմվմ. 6.5)

Չատկու ցնծութեան եւ յաղթանակի տօնն է, որովհետեւ ան կ'ոգեկոչէ Յիսուս Քրիստոսի յաղթական յարութեան դէպքը: «Չէ աստ քանզի յարեալ» ամենէն հրաշալի լուրն էր որ աւետաբեր հրեշտակը կու տար առաջին Չատկուան առաւօտը իւղաբեր կանանց, որոնք «ողջը մեռելներուն մէջ կը փնտռէին»:

Քրիստոսի յարութիւնը Յիսուսի աշակերտներուն եւ առաքեալներուն քարոզութեան բներգն է: Իսկ Պողոս Առաքեալին համար՝ իր վկայութեան եւ աւետարանչական գործին անկիւնաքարը: Այսպէս կը գրէ ան. «Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՝ գուր է մեր քարոզութիւնը, գուր է նաեւ ձեր հաւատքը: Բայց ոչ. Քրիստոս արդարեւ յարութիւն առած է» (Ա. Կորն. 15. 14, 20):

Ըստ Պողոս Առաքեալի, Քրիստոսի յարութիւնը անհերքելի իրականութիւն մըն է, որովհետեւ առանց յարութեան, մարդկութեան փրկութիւնը անկարելի պիտի ըլլար: Մահուրէն պարտուած Յիսուսը պիտի չկրնար Փրկիչ ըլլար մարդկութեան: Առանց Քրիստոսի յարութեան, անոր մահը առ առաւելն մարտիրոսութիւն մը պիտի ըլլար, ոչ աւելի: Ճշմարիտ քրիստոնեաները մարտիրոս մը չէ որ կը պաշտեն, այլ յարուցեալ եւ յաւէտ ապրող Քրիստոսը:

Բայց աւելին, Քրիստոնէական եկեղեցին քսան դարերէ ի վեր հռչակած է Քրիստոսի հրաշափառ



Քրիստոսի Յարութիւնը պիտի դարձնենք մեր կեանքի նոր արշալոյսը, որպէսզի կեանքը ապրինք յուսալից, նոր տեսիլքներու հետամուտ, ճարտարապետելու օրհնեալ կեանք եւ ի մասնաւորի՝ մեր շուրջիններու կեանքին մէջ դառնալու ներշնչումի աղբիւր:

Այս Չատկու մեր Թեմական կեանքին մէջ առանձնատուկ նշանակութիւն ունի, որովհետեւ մեր Թեմն իր Առաջնորդարանով եւ ծուխերով ու բոլոր հաւատացեալներով կը տօնախմբէ Թեմի հաստատման 90-ամեակը:

90-ամեակը պիտի արժեւորենք Յարութեան խորհուրդով, որպէսզի մեր առջեւ բացուած կեանքի ճանապարհը իմաստաւորենք բարի սպասումներով, հաւատքի գործերով, նոր հեռանկար-



յարութիւնը ոչ միայն իբրեւ պատմական դէպք, որ պատահեցաւ Աւագ Ուրբաթէն քանի մը տասնեակ ժամեր ետք Մէկշաբթի առաւօտուն, այլ նաեւ, բայց մասնաւոր՝ որպէս անձնական փորձառութիւն Յիսուսի առաջին հետեւորդներուն կողմէ, եւ այնուհետեւ քսան դարերու ընթացքին միլիոնաւոր հաւատացեալներու կողմէ: Քրիստոսի յարութեան գօրութիւնը յեղաշրջած է անոնց կեանքն ու կենցաղը, նոր աւիւն եւ նոր աշխարհայեացք տուած է անոնց կեանքին:

Արդարեւ, իր պատմական տարողութենէն տարանջատաբար՝ Քրիստոսի յարութիւնը մեծապէս նշանակալից կը դառնայ երբ անձնական փորձառութեան վրայ հիմնուած է: Մարդիկ կրնան պատմական

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Ամէն հայ լաւ գիտէ բողոք, ցասում եւ յուսախաբուածութիւն արտայայտող հռչակաւոր խօսքը անմահանուն բանաստեղծ Սիւսանայի, որ կ'ըսէ. «Ո՛վ մարդկային արդարութիւն, թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ»:

Հզօր երկիրներուն օգնութիւնը հայցող եւ անոնց խաչի ու հաւատքի գոհասեղանին առջեւ դարեր ամբողջ ծնրադիր աղօթող հայը իրաւունք ունէր իր յուսախաբ բանաստեղծին բերնով թքելու այդպիսի արդարութեան ճակտին, որ հեռուէն հեռու սիրեց մեզ եւ փրկութեան ափին չհասցուցած՝ լքեց մեզ:

Խաչակիրներէն լքուած ու «բազում դարեր դաժան ճամբայ անցած» մեր ժողովուրդը, այդ անհաս արդարութեան ճակտին թքելով չգոհացաւ սակայն, այլ իր ճակատագիրը յանձնեց հիւսիսի անաստուած դրացիին, որուն խիստ բայց ապահով իշխանութեան տակ ամբողջ 70 տարի ցեղասպան միւս դրացիին վտանգէն հայրենիք փրկեց, մշակութասէր սերունդներ պատրաստեց, երկիր շինեց ու լեռներ ձեռքեց, եւ անթիւ ու անհամար ազգային կոթողներ կերտեց, ինչպէս՝ Ծիծեռնակաբերդ, Մայր Հայաստան, Սարգարապատ ու Սասունցի Դաւիթ:

Հարիւր տարի ամբողջ, մեր ժողովուրդը մէկ տեղ կարմիր հագած եւ ուրիշ տեղ ալ կարմիրին դէմ կանգնած, տան մէջ հայրենաշինութեամբ եւ օտար տեղ ալ դպրոցաշինութեամբ ու հայապահպանութեամբ զբաղած, հասաւ անկախ երրորդ հանրապետութեան շեմին: Անոր օրհնեալ դռնէն ներս մտան անցեալի կարմիր ու ոչ-կարմիր դրօշակակիրները, եւ չարենցեան շունչով ու ոգիով տոգորուած՝ հաւաքական ուժով բերին փրկութիւնը Արցախի:

Եւ Ապրիլ 24-ի ցաւով ու յուշով բռունցք դարձած, մեր ժողովուրդը դաս առաւ անցեալէն՝ հասկնալու, թէ «միայն զէնքով կայ հայոց փրկութիւն», եւ իր ազգ-բանակի շարքերուն մէջ մտած որպէս զինուոր ու կամաւոր՝ փաստեց, որ գիտէ պաշտպան կանգնիլ իր հայրենիքի հողի ամէն մէկ թիզին:

Կիրակի օր, Ապրիլ 2-ին, հայրենի Ա1 հեռատեսիլի կայանը իր «ԵՐԳ ԵՐԳՈՅ» յայտագիրը նուիրած էր անցեալ տարուայ քառօրեայ պատերազմին ընթացքին զոհուած հայ նահատակ զինուորներու յիշատակին: Զոհուած զինուորներու սեւեր հագած կարգ մը մայրեր նստած էին առաջին շարքերուն վրայ եւ անոնց աջին տեղ գրաւած էին մարտական հերոսի կոչում ստացած կարգ մը զինուորները հայ բանակի: Յայտագրի ներկայացուցիչ Խորէն Լեւոնեանն ու մասնակից երգիչներն ու խօսնակները, բարձրորակ կատարողութեամբ եւ օրուայ բանիմաց յուզականութեամբ, արցունքներ խլեցին մայրերու աչքերէն եւ վստահաբար՝ դիտողի աչքերէն:

Ու պահ մը որպէս հայ մարդ կը խորհրդածես, թէ ապրելու համար որքան սեւ Ապրիլներ է տեսած մեր ծողովուրդը, եւ ամէն անգամ իր մահի, վէրքի, լացի եւ ցաւի Ապրիլներէն անցնելով ու ջահի պէս այրելով՝ լուսաւորած է ապրե-

լու իր ճամբան ու ճանապարհը: Սրբադասուած մեր նահատակ հայրերուն ու մայրերուն առջեւ խոնարհող մեր ազգը կ'ապրի ներկայ մը, որ իր բոլոր ժխտական ու հակասական կողմերով եւ ազգակներով իսկ կը մնայ լաւագոյնը մեր հազարամեակներու անցեալին մէջ: Որեւէ ժամանակէ աւելի տէրն ենք այսօր մեր ազգային որոշումին եւ անկէ բխած մեր ճակատագիրը բնորոշող վիճակին: Եթէ առաջին հանրապետութիւնը մեզի տուաւ անկախութիւն, երկրորդը տուաւ հայրենաշինութիւն, ապա երրորդը մեզի տուաւ իրաւունք՝ աշխարհի միւս ժողովուրդներու ընտանիքին կողքին առանց բարդոյթի եւ հպարտութեամբ կանգնելու որպէս յառաջադէմ երկիր հայրենի, եւ անոր շուրջ հաւաքուած՝ միակամ ու անբաժան, հայրենասէր ու զարգացած Սփիւռք:



Ապրիլ 24-ի խորհուրդով եւ գիտակցութեամբ պէտք է գիտնանք ու հաւատանք, որ այս օրերու տագնապած աշխարհը տարբեր չէ անցեալի այն աշխարհէն, երբ պարտադրաբար դէպի



մահ քալեցին մեր նախնիները նոյն տեսակի կրօնամոլ հորդանքներու արարքներուն պատճառաւ. եւ մանաւանդ հաւատարմ ազգբանակի գիտակցութեամբ, թէ մարդկային արդարութիւն կոչուող վճիռը կը տրուի որպէս ծաղկեփունջ յաղթողին, ու որպէս ծաղկեպսակ կը դրուի պարտուողի շիրիմին:

Նախագահ Սարգսեան համոզուած էր անկասկած այս իրականութեան, երբ շաբաթ մը առաջ, անցեալ տարուայ քառօրեայ պատերազմի յիշատակին նուիրուած հանդիսութեան ընթացքին, հայ զինուորներուն ուղղած իր խօսքով ըսաւ, թէ մեր ժողովուրդը այլեւս երբեք միլիոնով զոհ պիտի չտայ: Ծաղկեփունջ՝ յաղթանակէ վերադարձող հայ զինուորին, եւ ծաղկեպսակ՝ իր դէմ կուռողին:

Մեծ Եղեռնի 100+2-րդ տարեդարձի առթիւ
 In commemoration of the
Armenian Genocide's 100+2 Anniversary
 Organized by
 Gaidz Youth Organization
 &
 Armenian Council of America's
 San Gabriel Chapter

ՀՄԿՈՒՄ

COMMEMORATING
 THE ARMENIAN GENOCIDE
“HOPE FOR THE FUTURE”
 Sunday April 23, 2017
 Կիրակի Ապրիլ 23, 2017
 MEMORIAL PARK
 PASADENA
 85 Holly Street, Pasadena, CA 91101
 Starting at 7:00 pm

«ՑԱԻՐ ԻՆՉՊԵՄ ԿՐՆԱՍ ՍՈՒՆԱԼ...»

ՊՈԿՏ. ԳՐԱՅԻՐ ԵՒՊԵՏԵԱՆ

Իւրաքանչիւր աշխատանքա- յին ճամբորդութեան եւ ոչ հայկա- կան հանդիպում-ժողովներու եւ ելոյթներու ընթացքին միշտ ալ հետամուտ կ'ըլլամ ներկայացնե- լու, զէթ համառօտ, իմ՝ հայուս պատմութիւնը: Պէտք չէ երբեք ակնկալել, որ ամբողջ աշխարհ գիտնայ մեր պատմութիւնը: Եթէ կան շատեր, որոնք լսած են մեր պատմութեան եւ անոր ստեղծած «ցաւին» մասին, բայց նաեւ կան ուրիշներ, որոնք համար այս մէկը նորութիւն է: Եւ յարմար է, որ լսողը նաեւ գիտնայ, թէ ո՛վ է զեկուցողը, որուն պատմութեան ականջալուր ըլլալով՝ շատ աւելի լաւ պիտի ընկալէ զեկուցողին ըսածը:

Մարտ 2017, Քէյփ Թաուն, Հարաւային Ափրիկէ: Կը խօսէի մեր Աստուածաշնչային ընկերու- թեան գրասենեակի անձնակազմին՝ Միջին Արեւելքի Քրիստոնէական առաքելութեան վերջին ժամա- նակներու մարտահրաւերներուն մա- սին: Ներկայացուցի, թէ ինչպէ՛ս ես, որ հայ եմ, ծնած եմ արաբական երկրի մը մէջ: Ո՛չ միայն խօսեցայ Յեղասպանութեան արհաւիրքին, հայութեան տեղահանումին եւ աշ- խարհով մէկ տարածուելու մեր իրականութեան մասին, այլ նաեւ՝ այն աստուծոյ «ցաւին», որ հետե- ւանք է այդ մեծ համամարդկային ողբերգութեան: «Յեղասպանութե- նէն ճողոպրած երրորդ սերունդի ներկայացուցիչ եմ, բայց տակաւին իմ մէջս կը կրեմ այս ցաւը», եղաւ իմ մատնանշուծս:

Սրահին անկիւնը նստած էր չափահաս տարիքով սեւամորթ պա- տասխանատու պաշտօնեայ մը: Անդ- րադարձայ, որ միակ սեւամորթն էր սրահին մէջ, իր մնացեալ բոլոր գործակիցները սպիտակամորթներ էին: Զեկուցումիս վերջաւորու- թեան ուղղեց իր հարցումը՝ ոչ թէ Միջին Արեւելքի տագնապին առն- չութեամբ, այլ ցեղասպանութեան պատճառած իմ ներաշխարհի «ցա- վին» վրայ: «Յաւը ինչպէ՛ս կրնաս մոռնալ», հարցուց ան:

Ինծի համար զարմանալի չթուեցաւ այդ հարցումը: Ակնկա- լելի էր՝ նկատի ունենալով, որ Հարաւային Ափրիկէն երկար տա- րիներ ապրած ու տաղանապաճ է «ցեղապաշտական» իրավիճակէն՝ իր ընկերա-քաղաքական ու պետա- կան կարգավիճակներուն ընդմէ- ջէն: Թէեւ այսօր պետական ու կազմակերպչական կառույցները

փոխուած են, բայց չեմ գիտեր՝ հո- գիները ու մտածողութիւնը որ- քան: Հարաւային Ափրիկէն տակա- ւին կը տաղանապաճ ցեղապաշտական կարգավիճակի դրութեան ստեղ- ծած խտրականութեան իրականու- թենէն եւ անոր պատճառած ցաւէն: Ու սեւամորթ գործակիցիս հար- ցումը կու գար այդ նոյնինքն ցեղապաշտական կեանքին ստեղ- ծած ու ապրուած ցաւին փորձա- ռութենէն: Եւ երեւի ան ուզեց տեսնել, բայց նաեւ՝ համեմատել, թէ ես ինչպէ՛ս կրցայ ելք գտնել, ինչպէս ես կրցայ դուրս գալ ցաւով ծանրաբեռնուած կեանքին ու փոր- ձառութեան մէջէն՝ գտնելու համար բարեք հանգստութիւն: Իսկ իր ցաւի պայքարը...

«Բարկութիւն կայ մէջս»։ Հա- րաւային Ափրիկէի գործակիցնե- րէս Հենլի Ռուսոն է, որ կ'ընկերակ- ցէր ինծի՝ այցելելու Ռուսոյն կղզիի բանտը: Հոն, ուր Նելսոն Մանտե- լան եւ աւելի քան հազար սեւա- մորթ քաղաքական բանտարկեալ- ներ երկար տարիներ իրենց կեան- քերը անցուցին՝ հաւասարութեան տեսլականին հասնելու եւ ստեղծե- լու նոյն իրենց երկրին համակար- գին համար: Հենլին սպիտակա- մորթ է:

«Անգլիացիք իրենց գաղու- թատիրութեան ժամանակ ամէն անմարդկային հնարքներու ձեռ- նարկեցին՝ կլանելու համար մեր երկիրը եւ հարստութիւնը: Անգլ- իական գաղութատիրութիւնը վեր- ջացաւ, եւ մենք ըրինք ճիշդ նոյնը մեր ժողովուրդին եւ մեր մէջ»։ ըսաւ ան:

Կարօ եւ Գօգօ Գրիգորեան եղբայրներ (Սահարա ճաշարանատէրեր, որոնք Հ.Մ.Մ.ի Բ. խումբի հովանաւորներն են):
Տիար Վահէ Աջապահեան:



Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժէլ Գազէզեան պարգեւատրութեան ընթացքին



Տիար Վազգէն Գալթագճեան պարգեւատրութեան ընթացքին



Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գըթֆեան պարգեւատրութեան ընթացքին



Յարութ Տէր-Դաւիթեան Արարատ լեռ բարձրացած ՀՄՄ-ի դրօշը կը յանձնէ միութեան անդամներուն

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարաքաթերփին

Կազմակերպութեամբ՝
Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ Սահակեան Սանուց Միութեան
ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅ
Նուիրուած Բանաստեղծ, Մանկավարժ, Մշակութային եւ Հանրային Գործիչ՝
ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆԻ
Ծննդեան 80-ամեակին եւ բեղուն վաստակին

Կը զեկուցեն՝
Տք. Արշակ Գազանճեան
«Մտատրականը եւ Մշակութային Գործիչը»

Գաբրիէլ Մուրյեան
«Մարդը եւ Հանրային Գործիչը»

Տեղի կ'ունենայ
Հինգշ. Մայիս 4, 2017-ին
Երեկոյեան ժամը 8-ին

ՀԿԲՄ-ի Կարօ Սողանալեան սրահէն ներս
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104



ԼԵՓՍԻՈՒՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՆՎԷՐ ՓԱՇՊԱՅԻ ՀԵՏ

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

«Եթէ մի երեք այդպիսի Մուսա Լեռ լոյս ընկնէր, գործը այլ ընթացք կը ստանար»:

Լեփսիուսը, թրքական պետութեան «Նեքին Գործերի Նախարարութիւնում» էր, Թալաթի ամրոցը, թէ՛ շնագայլ մարդու որջն էր: Քայլում էր ուռուցիկ վարագոյրներով ծածկուած առանց դռների սենեակների միջանցքով: Նրան առաջնորդում էին էնվէրի պաշտօնատեղիի ընդունարան-առանձնասենեակ: Նրա պատին, երեք տարբեր անձանց լուսանկարներով համադրուած խոշոր նկար էր: Նրա աջ կողմում Նապոլէոնի, ձախ կողմում Ֆրիտրիխ Մեծի խոշոր չափերով դիմանկարներն էին, իսկ կենդրոնում ... նոյն ինքը՝ էնվէրի դիմանկարը: Սպասեակը սուրճ էր մատուցել: Լեփսիուսը, նեարդները զգաստացնելու համար անյազ խմել էր անուշ բոյրով, գաւաթներից մեղմ գալարներով շոգի արձակող համեղ սուրճը:

Լեփսիուսին նկարագրել էին էնվէրի արտաքինը: Զարմացել էր տեսնելով այդ թուրք Մարսը՝ աշխարհի կենաց ու մահու ութ թէ՛ իննը անօրէններից մէկը: Ինչքա՞ն փոքրամարմին ու անբարետես էր: Հասկացել էր պատին ամրացուած նկարի իմաստը, 1 մեթր 60 սանտիմեթր հասակով հանճարեղ հերոսներ էին, հակառակ իրենց մարմնական արատների, մեծ յաջողութիւնների էին հասել: Բարձրահասակ տղամարդու տեսք ձգելու համար՝ մարշալական հանդերձները ամուր ու զուսպ գրկել էին նրա իրանը: Կրծքաւանդակի հագուստից կարուած փայլփլուն շքանշանները թեթեւամիտ պատանու ու պճնամոլի տպաւորութիւն էին թողնում, իսկական «Գնչու պարոն»:

Շփոթուած ու ամօթխած պատանու դէմք ունէր, աչքերը թարթում աղջկայ նման, կախ ընկած ուսերը, նեղ կոնքերը անճոռնի տեսք էին հաղորդում մարմնին:

Լեփսիուսը էնվէրի հետ գրոյցը սկսել էր գերմանացի մի երկրպագուի ողջոյնը նրան հաղորդելով: Էնվէրը գոհունակ ժպիտով պատասխանել, որ մեծ յարգանք է տածում Գերմանիայի հանդէպ, նրանք աշխարհի ամենագարգացած ժողովուրդն են, այս պատերազմում հրաշալի յաղթանակներ դարձնում: Հակառակ Գերմանիայի հանդէպ արտայայտած համակրանքի, «Կոմիտէ»-ում նա ներկայացնում էր Ֆրանսական ուղղութեան կողմնակիցներին: Լեփսիուսը նրա յայտնել էր որ Գերմանիայում հիացողներ ունի եւ իրենից աշխարհաստան արարումներ են սպասում:

«Պատերազմը դժուար է, պատասխանել էր, սակայն թուրք ժողովուրդը պատրաստ է կատարելու իր առաքելութիւնը: «Երկրի ներսում էլ» հարցրել էր Լեփսիուսը: Էնվէրը չհասկանալու էր տուել հարցումը, հաւաստել էր, որ կովկասեան ռազմաճակատում դրութիւնը բարելավում է: Լեփսիուսը կրկնել էր, «Երկրի ներսում ասելով նկատի չէր ունեցել ռազմաճակատը, այլ՝ երկրի խաղաղ վիճակները»: Էնվէրը անմտորէն աւելացրել էր՝ «Եթէ երկիրը պատերազմում է, ապա ինչ որ չափով այն ամբողջութեամբ ռազմական գօտու մէջ է գտնուում »:

Լեփսիուսը, իր այցելութեան նպատակն էր յայտնել, որ «Ինքը ոչ

թէ սեփական քմահաճոյքի համար էր նախարարից տեսակցութիւն խնդրել, սակայն, իբրեւ՝ «Գերմանական Արեւելեան Միաբանութեան» նախագահը պարտաւորութիւն ունի իր միաբանութեանը ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդել այն, ինչ որ կատարուել ու կատարուում է նրանց երկրում: Իր երկրի հանդէպ ունեցած պարտքն է նաեւ «Արտաքին Գործոց Նախարարութեան»-ը յայտնելու իր այցելութեան մանրամասները, նոյնիսկ Ռայխկանցլէրն է հետաքրքրում դրանով: Եւ իր երկիր վերադարձին, «Հայկական Հարցի» մասին գեկուցելու է Ռայխս-դակի պատգամաւորներին ու լրագրողներին, շարունակելով խօսքը աւելացրել, որ նրա աստիճանի մի գօրավար, մի հերոս անձնաւորութիւն չէր անի այն, ինչ որ պատմութեան մէջ կարող էր ստուեր գցել նրա անձի վրայ»:

«Էնվէրը յարել էր, որ ինք իմացել էր նրա տեսակցութիւն խնդրելու նպատակը «Յայտնի Գործի» վերաբերեալ, պատրաստ էր ցանկացած տեղեկութիւն տրամադրել իրեն, եւ որ երկիրը կառավարողները միշտ էլ ցանկացել էին օժանդակել Հայ ազգին, նրա հանդէպ եղել էին արդարամիտ: Հայերը խանդաղատանօք ընդունել էին երկրում իրականացուած յեղափոխութիւնը, երդուել էին հաւատարիմ լինել, սակայն դրժել էին իրենց խոստումը, անգիտացել էինք այն՝ քանի դեռ Օսմանեան ազգը վտանգուած չէր, պատերազմը սկսելուց յետոյ շատացել էին նրանց ուխտադրժութեան ու դասալքութեան դէպքերը, այն ապստամբութեան հասնելով սոխպուած էինք դիմել փոխարարձ միջոցառումներին, այլապէս չէինք կարող պատերազմ մղել»:

Լեփսիուսը հարցրել էր ինչո՞վ էին ապացուցուել դաւաճանութեան եւ ուխտադրժութեան դէպքերը: Էնվէրը յայտարարել էր՝ նրանց ունեցած կապերը Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիոյ հետ, խարդաւանքներ, լրտեսութիւն եւ ամէն ինչ որ կարող էր անցնել մարդու մտքով: Երկիրը մասնահատելու ու այնտեղ անկախ պետութիւն հռչակելու համար՝ Ռազմական դատարանը տասնըհինգ հոգի մահուան էր դատապարտուել (խօսքը Հնչակեան քսան կախաղանների մասին էր):

Այդ անարգ, ոճրագործ մարդիկ, երկիրը պատերազմի տանելու, իրենց իսկ քաղաքացի հազար հազար մարդկանց տարագրութեան ճամբաներ տանելու, հեռու անապատներում տանջալից ոչնչացման համար հեռակազ կարգով իրենք մահուան պիտի դատապարտուէին: Ահից փախել էին երկրից, վրիժառու արորդիներ գտել նրանց թաքուն որջերը, իրենք էին իրագործել թուրքիայի կայսերական դատարանի մահուան վճիռները:

«Նրանք պատերազմից առաջ էին ձերբակալուած եղել, ասել էր Լեփսիուսը իսկ իսթամպուլում ձերբակալուած մտաւորականների դաւաճանութիւնը ապացուցուած էր: Էնվէրը պատասխանել էր, որ» Գաղանկից պետութիւնների դէմ մղուած Տարտանը-Կալիպոլի ռազմաճակատի պայմաններում չէին կարող յանդուրժել հաւանական դաւաճաններին»:

Տիմար, անօրէն, ապիկար հարիւրապետի ասիճանի ճիւղը մարդը, գիտէ՞ր արդեօք բանաս-

տեղծութիւնն ի՞նչ է, մտաւորականի արարումը ի՞նչ է: Լեփսիուսը պատասխանել էր, որ իրենց յայտնի էին եղել գերմանական հիւպատոսների գեկուցագրերը, միսիոներների գրառումները, որոնցից շատեր ականատես էին եղել այդ գարհուրելի եղեռնագործութիւններին: Ինքը իմացել էր նաեւ թուրքիայում ամերիկեան դեսպան՝ Մորգընթաուի գեկուցագրերում նկարագրուած երկրում տեղի ունեցած դէպքերի մասին:

«Մորգընթաուն Հրեայ է» կանչել էր էնվէրը, «Նրանք միշտ պաշտպանել են փոքրամասնութիւններին»:

«Կարելորդ Մորգընթաուն չէ, այլ իրողութիւնը, որը չէք կարող այն ժխտել, որ հարիւր-հարիւր հազարաւոր մարդիկ տարագրութեան ճամբաներին են, դուք այն գաղթ էք համարում, այն բառի աղաւաղում է: Ինչպէ՞ս կարելի է հողագործների, արհեստավորների, շէնքերի ու քաղաքաբնակ մարդկանցից ու մտաւոր աշխատանքով զբաղուողներից բաղկացած մի ամբողջ ժողովուրդի տարագրել Միջագետքի անապատներ, ամայի վայրեր, որտեղից նոյնիսկ Բեդուին ցեղերն են խուսափում: Իշխանութիւնները այնպէս են այն իրագործում, որ այդ թշուառները ութ օրերի ընթացքում ծարաւից, հիւանդութիւններից մեռնում են, կամ խելագարուում: Զինուորականները, քրտերը ու աւագակները սպանում են պաշտպանուած տղամարդկանց, իսկ աղջիկներին ու կանանց բռնաբարում, առեւանգում են»:

«Յաւալի է» պատասխանել էր էնվէրը, «Սակայն, պետութիւնը պարտաւոր է ապահովել երկրի ռազմաճակատային գօտու ապահովութիւնը»:

«Ռուսզմաճակատային գօտի՞, կանչել էր Լեփսիուսը: Այդ նոր նրբերանգ է, մնացած բոլորն էլ՝ Զէյթունը, պետական դաւաճանութիւնը, դաւադրութիւնները, լրտեսութիւնը ասուած բաներ են: Սուլ-

թան Ապտիւլ Համիտը վարպետօրէն էր այն գործադրել: Երբ խորհուած եմ տարագրութեան մասին, անճարակի մէկն էր նա: Զեր կուսակցութիւնը իշխանութեան է տիրացել այն բանի համար, որ ցանկացել էր նրա արիւնալի ժամանակաշրջանը փոխել արդարութեամբ, միաբանութեամբ, առաջդիմութեամբ, որով կոչուած է Զեր կոմիտէի անունը»:


Էնվէրը հակադարձելով նրան ասել՝ «Եթէ Գերմանիան, թէկուզ այլ պայմաններում լինէր եւ տուեալ դէպքի նման ունենար շատ թշնամիներ, պատերազմող ձեր երկիրը չէ՞ր գործադրի ամէն միջոցներքին թշնամուց ազատուելու համար: Այն ժամանակ էլ զարհուրելի կը համարէիք այն եւ բնակչութեան վտանգաւոր մի մասն էլ անմարդաբնակ վայրեր չէ՞իք տարագրի»:

Լեփսիուսը բարձրաձայն կանչել էր՝ «Տարբեր համոզումներ ունեցող հայրենակիցներիս հանդէպ եթէ ձեր նման վարուէին, իսկոյն կը հրաժարուէի Գերմանիայից ու կը հեռանայի Ամերիկա»:

Էնվէր թէ՛ «Իր նման մտածող ժողովուրդը գուրկ է ազգային կամքը առաջ տանող ուժականութիւնից»:

Էնվէրի հետ վարած գրոյցի հոգեկան խռովքի տառապանքից մտամոլոր էր դարձել Պատուելին, գրպանից թաշկինակը հանել, այն վեր պահել, կարծէս հանդէս էր գալու որպէս բանագնաց՝ «Զեր կատարածը ներքին թշնամուց պաշտպանուածութիւնը չէ, այլ՝ ուրիշ ազգի մարդկանց բնաջնջումն է, համարձակուած եմ Նորին Վսեմութեան ուշադրութիւնը հրաւիրել որոշ անբարենպաստ հանգամանքների վրայ: Թրքական կայսրութիւնը առանց Հայ ժողովուրդի կորած է՝ տնտեսապէս, մշակոյթապէս, հետեւաբար նաեւ ռազմական տեսակէտով: Խօսքը նաեւ առեւտրի մասին է, որի ինստուն առ հարիւրը

Շար.ը էջ 16



ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN APOSTOLIC CHURCH
2215 E. Colorado Boulevard, Pasadena, California 91107
Tel: (626) 449-1523 ~ Fax: (626) 449-7039
Email: stgregoryarmenianchurch@yahoo.com

St. Gregory Armenian Orthodox Bookstore

Presents


The newly published 14th volume in the UCLA series, *Historic Armenian Cities and Provinces*

Armenian Communities of the Northeastern Mediterranean


Musa Dagh-Dört-Yol-Kessab

(with Antioch, Beylan, Ruj Valley, and villages near Latakia)

On Sunday May 7, 2017 @ 12:30 pm (Immediately after Badarak)
2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107



Armenian Communities of the Northeastern Mediterranean
Musa Dagh - Dört-Yol - Kessab



Presented by Dr. Richard G. Hovannisian

Featured Speaker with Illustrated Presentation
Light reception provided, Book purchase and signing available after program

This power-point presentation is based on the last three volumes of Professor Hovannisian's UCLA conference series "Historic Armenian Cities and Provinces." It focuses on lesser known but vibrant Armenian communities in Asia Minor, such as Ismid, Bardizag, Adabazar, Armash, and Bursa as far as Konia; the Cappadocian region of Gesaria/Kayseri, Talas, Evkere, Tomarza, and Evereg-Fenese; and the Northeastern Mediterranean coastal centers of Dort-Yol, the Sanjak of Alexandretta, Musa Dagh, and Kessab, an area where the rugged and sturdy people repeatedly demonstrated their heroism.

ԼԵՓՍԻՈՒՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՆԿԵՐ ՓԱՇՊԱՅԻ ՀԵՏ

Շարունակուած էջ 15-էն

գտնուում է քրիստոնեաների ձեռքին, ապրանքների ներմուծումը կատարուում է Հայկական առեւտրական ընկերութիւնների միջոցով, երկիրը հումքով ապահովելու գործը նաեւ նրանք են իրականացնում: Նրանցից յիշատակութեան արժանի է Աւետիս Բագրատեանի յետնորդների աշխարհահռչակ առեւտրական տունը Եւրոպայի բազում քաղաքներում մասնաճիւղեր ունի: Ինքս, երկրի ներսում կատարած շրջագայութեան ժամանակ նկատել եմ, որ Անատոլիայի գիւղատնտեսութիւնը վարող հայերի եւ թուրք ազգի սակաւաթիւ գիւղացիների միջեւ հակայական տարբերութիւն կայ: Թուրքերը, ոչ միայն տասնեակ հազարների ատանացրեցին նրանց կալիւր մեքենաները ու շոգէգուլթանները: Հայ ժողովուրդը, Օսմանեան բնակչութեան ամենակիրթ ու ամենագործունեան է, նրա գործադրած հարիւրամեակների ջանքերը երկիրը դուրս են բերել բնատնտեսական վիճակից, նրան տարել են ժամանակակից հողագործութեան ու արդիւնաբերութեան դէպի նոր ժամանակներ: Այդ օրհնեալ աշխատանքի համար նա ոչնչացուում է, դառնում տէրերի վրիժառուութեան գոհը:

Հնարաւոր է, որ երկրի ներսի Հայ արհեստաւորներին, ջուլհակներին, արդիւնաբերողներին փոխարինել թուրքերով: Սակայն, ո՞վ կը փոխարինէր Եւրոպա ուսում առած բազմաթիւ Հայ բժիշկներին, որոնք հոգատարութեամբ բուժել են նաեւ օսմանցիներին: Ո՞վ կը փոխարինէր բազմաթիւ ճարտարապետներին, փաստաբաններին, ուսուցիչներին, որոնց աշխատանքի շնորհիւ է երկիրն առաջադիմում: Կարող էք պնդել, որ կարող էք գոյատեւել առանց մտաւոր մարդկանց ջանքերի, սակայն, մարդ չի կարող ապրել առանց ստամոքսի, կտրատում էք երկրի ստամոքսը, ակնկալելով, որ վիրահատութիւնը յաջող կ'անցնէր»:

Էնվէրը յարգանքով էր լսել Լեփսիուսի խօսքը, սակայն նրա դէմքի արտայայտութիւնում ոչ մի խորհուրդի ծալքի ստուեր էր իջել, ինչպէս նրա նաեւ մարմինը պինդ գրկած համազգեստի վրայ: Կերպարանափոխուել էր Միսիոնար Պատուելին, իր խօսքի արթնած հոգեկան յուզմունքից, բերեղիկներին ջրի ջրի ղէմքին, առուակների նման հոսել էին դէմքի նուրբ կնճիռներից, անձկութիւնից փողկապը մի կողմ հրել, բաժկոնի թեւքերը վեր քաշել:

«Ի՞նչ արած, յարել էր էնվէրը, Թուրքիան պատերազմից յետոյ տկար ստամոքս կ'ունենայ: Թուրքիայում քառասուն միլիոն թուրք ժողովուրդ կայ, արդեօք քաղաքական մեծ ծրագիր չէ՞ր լինի այդ քառասուն միլիոնը համախմբել, ազգային պետութիւն հիմնել, որը Ասիայում նոյն դերը կը կատարէր ինչ որ Գերմանիան Եւրոպայում: Հայերի մէջ սոսկալի շատ մտաւորականներ կան, եթէ դուք կողմնակից էք այդ կարգի մատաւորականներին, ես ոչ: Թուրքերը նման մտաւորականներ քիչ ունեն, սակայն դրա փոխարէն հին ու հերոսական ցեղ են, որը կոչուած է մեծ կայսրութիւն հիմնել, որի համար խոչընդոտներ յաղթահարելով պէտք է բարձրանան»:

Ոչ մի բառ էր արտասանել Լեփսիուսը, նրա խօսքից ջղաձգուել, ձեռքերը սեղմել էին: Այդ փոքրիկ գլուխը այնպիսի թուրք էր, որից իրազեկ որեւէ մարդ պիտի ապշէր: Նա գիտէր, որ Անատոլիայում հազիւ թէ գտարիւն թուրք լինէր: Եթէ հիւսիսային Պարսկաստանի, Կովկասի, Թուրքեստանի բոլոր վրանաբնակ ժողովուրդները եւ Եւրոպայի կէսի չափը տափաստաններին թափառող ձիագողերը միասին հաշուէին, հազիւ քսան միլիոն կը լինէին: Նրա այդ երազանքը՝ ազգամոլութեան թմրադեղի արդիւնք էր: Զգալով իրադրութեան ծանրութիւնը, շարունակել էր, «Կայսրութիւն էք ուզում հիմնել, սակայն, նրա պատերի տակ մնալու է Հայ ժողովուրդի դիակը: Արդեօք այժմ հնարաւոր չէ՞ խաղաղ ճանապարհորդները: Էնվէրը, իրենց կոմիտէի ճշմարտութիւնը բացայայտելով, դադարել ամօթխածութեամբ ժպտալ, մանր աչքերը հեռուն սեւեռել, պաղ ստուեր էր իջել աչքերի ցանցաթաղանթներին, գայրոյթով կանչել» Մարդու եւ ժանտախտի ժահրերը բարեկամներ չեն կարող լինել»:

Լեփսիուսը ընդհատել էր նրա ահաւոր դժնդակ խօսքը, անմիջապէս յարել՝ «Ինք խոստովանում է իրենց մտադրութիւնը՝ պատերազմի վիճակը օգտագործելով բնաջնջելու ամբողջ Հայ ժողովուրդը»:

Էնվէրը, զգալով, որ իր խօսքը հեռուն էր տարել իրեն, փոխել է խօսակցութեան եղանակը, սկսել է նորէն կեղծ բարեացակամութեամբ հանդէս գալ, յայտարարել, «Իր անձնական այդ կարծիքը ու մտադրութիւնը արտացոլուած են նաեւ կառավարութեան հրապարակած պետական պաշտօնական հաղորդագրութիւնում: Պատերազմը, ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը հարկադրում են կառավարութեանը օրէնքի ամբողջ խստութեամբ պատժել այն քաղաքացիներին, որոնք ձգտում են կործանել պետութիւնը»:

Լեփսիուսը ձեռքերը սեղմել էր իր լայն, գեղեցիկ ու խոհուն վսեմ ճակատին, շարունակել խօսքը՝ «Առանձին մարդկանց ու պարզապէս քաղաքականութեան պատճառով չի կարելի դատապարտել մի ամբողջ ժողովուրդի, նրանց կանանց ու երեխաներին, մանուկներին, ամենա զազանային մահուան ենթարկել, մի քաղաքակառուցիչ, որից նրանք ոչինչ են հասկանում: Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում ձեր իսկ ժողովուրդի ու նրա ապագայի վրայ: Պատերազմը կ'աւարտուի, Թուրքիան հաշտութիւն կնքելու անհրաժեշտութիւն կ'ունենայ: Եթէ այն ձախող լինէր, այն ատեն ի՞նչ կը լինէր: Իր ժողովուրդի հանդէպ պատասխանատուութիւն կրող առաջնորդը պէտք է հոգայ իր անելիքի մասին: Բանակցութիւնների ատեն ի՞նչ վիճակի մէջ կը լինէր հաշտութեան Օսմանեան յանձնաժողովը, եթէ նրան հարցնէն՝ «Ո՞ւր է քու եղբայր Աբելը»: Յաղթանակած տէրութիւնները, թշնամու կատարած յանցանքի համար կը բաժանէին յաղթանակի աւարը: Այն ժամ, պատասխանատուութիւնը իր վրայ վերցրած ժողովուրդի մեծագոյն մարդը, ամենազոր մարդ էնվէր Փաշան ի՞նչպէս էր արդարանալու իր ժողովուրդի առաջ»:

«Ով որ քաղաքականութեան ասպարէզ է մտնում, երկու առանձնապատկութիւն պիտի ունենայ՝ արհամարանք մահուան նկատմամբ, անասան հաւատք սեփական որոշումներին», ասել էր էնվէրը:

Լեփսիուսը, ձեռքերը կուրծքին խաչած, ոտքի կանգնել: Հայ ժողովուրդի Աստուածառաք պահպան հրեշտակը, այլաչլուել էր զրոյցի խոռովքից, գրպանից կախուել էր թաշկինակը, անդրավարտիքը ծնկերին իջել, փողկապը լրիւ ծռուել վերնաշապիկի մի կողմի վրայ, ակնոցի ապակիներն էին պղտորուել ակներից ծորած արցունքի անտես հատիկներից: Խռովայոյզ Պատուելին խոնարհուել էր Թուրք էնվէր Փաշայի առաջ, աղաչել՝ բաւականանալ մինչեւ հիմա կատարուածով, չշարունակել պատժել գոյութիւն չունեցող մի թշնամու: Արեւելքի ճամբաներին մեռնում են հարիւր հազարաւոր մարդիկ: Հրամայեցէք, որ տարագրութեան նոր կարգադրութիւններ չկատարուեն: Բոլոր բաւառները, վիլայէթները դեռ դատարկուած չեն: Ասացէ՛ք բաւական է, երբ Գերմանիա վերադառնամ կը փառաւորեմ Ձեր անունը»:

«Դուք գերագնահատում էք իմ իրաւասութիւնների աստիճանը Պարոն Լեփսիուս, ասել էր էնվէրը, կառավարութեան նման որոշումների կիրառումը տնօրինում է Ներկին Գործերի Նախարարութիւնը: «Որոշումները կիրառում են ոչ նախարարը, ոչ Մյուլթեսարը՝ անսիրտ, բիրտ ստորադասները, կրտսեր ենթասպաները, պատասխանել էր Լեփսիուսը, մի՞թէ Ձեր եւ նախարարի կամքն է, որ ճամբաներին փռուած կանայք մտրակներով առաջ ըջուեն, երկիրն ապականուի նեխած դիակներից, Եփրատը մեռնիներով լցուի, նրա ջրերը բարձրանան»:

«Գնահատում եմ Ձեր գիտելիքները երկրի ներքին գործերի մասին, յարել է էնվէրը, բաւականութեամբ կընդունեմ այս գործի կարգաւորմանը նպաստող Ձեր գրաւոր առարկութիւնները, կը ստուգեմ այն»:

Լեփսիուսը, ենթագիտակցութեան արթնած մղուսով առաջ էր պարգել թեւերը, ուրախ կանչել էր՝ «Իրեն ուղարկէին այդ գործը ստուգելու եւ որ իր արած նման խնդրանք՝ նոյնիսկ սուլթանը մերժած չէր եղել: Շարունակել էր, որ իրեն լիազորէին կազմակերպելու տարագիրների կարաւանները: Աստուած իրեն ուժ կը շնորհէր, ոչ մի դրուշ չէր պահանջի կառավարութիւնից, դրամական բոլոր միջոցները ինք կհայթաթէր, գերմանական ու ամերիկեան ընկերութիւնները այն իրեն կը տրամադրէին: Նախկինում նման աշ-

խատանք ինք կատարած էր եղել, հիմնել որբանոցներ, հիւանդանոցներ: Հակառակ պատերազմական վիճակի, կարող էր ինք իրականացնել այն եւ որ անձամբ ինքը իրենից շնորհակալ կը լինէր: Էնվէրը, լարուածութեամբ էր ունկնդրել պատուելիին: Փոխուել էր նրա պատանեկան անմիտ դէմքի արտայայտութիւնը, յարգալից պատասխանել՝ «Լեփսիուսի դիտաւորութիւնները հետաքրքրել են իրեն, սակայն մերժում է: Նրա ցանկութիւնը ցոյց է տալիս, որ մինչեւ այժմ սխալ էին միմեանց հասկացել: Եթէ ինքը մի օտարականի արտօնէր, որ հայերին օգնութիւն ցոյց տար, ապա այն կարծիքը կը ստեղծուէր, որ ընդունում է այլազգի անձանց, հետեւաբար նաեւ արտասահմանեան պետութիւնների միջամտութիւնը: Այդ դէպքում, կը խախլէին իրենց քաղաքականութեան հիմքերը, քաղաքականութիւն, որ Հայ ժողովուրդին կը սովորեցնէր ինչի էր յանգում օտար միջամտութեան կարօտը: Եւ որ ինքը պատժում էր պետական դաւաճանութեան վրայ հիմնուած նրանց երազանքը, յոյսերը, եւ եթէ ինք նրանց մօտ ուղարկէր իրենց ազդեցիկ բարեկամներին, կրկին կեանքի կը կոչուէին նրանց երազանքները»:

Ո՛չ, Պարոն Լեփսիուս, աւելացրել էր էնվէրը, այդ անհնարին է, չենք կարող թոյլ տալ ոչ մի օտարերկրացի նրանց բարեգործութիւն անէր, հայերը մե՛զ պէտք է տեսնէին որպէս իրենց բարեգործներին:

Լեփսիուսը ամէն ինչ կորած էր համարել, յուսահատ փլուել էր աթոռին, խօսելն արդէն աւելորդ էր համարել: Յուսակտուր նայել մանկամիտ նայուածքով այդ անոգրած ժողովուրդասպան մարդուն: Պատուելին խորատուգուել էր խորը մտածմունքների մէջ, անմիջապէս չէր ըմբռնել էնվէրի ամբողջ լկտիւթեամբ արած առաջարկը: Էնվէրը ասել էր, որ ինքն էլ մի առաջարկ ունէր՝ դրամ հաւաքէք, որքան կարող էք շատ դրամ հաւաքեցէք Ձեր նշած ընկերութիւնների միջոցով, այն բե՛րէք ինձ մօտ, այն կ'օգտագործէի համաձայն Պարոն Լեփսիուսի գաղափարների ու ցանկութիւնների, սակայն, երբեք չէի հանդուրժի ոչ մի օտարերկրացու միջամտութիւնը: Լեփսիուսին զաւեշտական էր թուացել էնվէրի առաջարկը, որ իր հաւաքած դրամը Թուրքիա պիտի մտնէր: Պատուելին լուել էր, ջախջախուած էր, թէեւ գրոյցից առաջ էլ մեծ յոյսեր չէր կապել հետ հանդիպումից՝

ՀԱՍԿԱՅԵԼ ԷՐ, ՈՐ ԱՇԽԱՐՀԸ ՓՈՒԼ Է ԵԿԵԼ...

«ՑԱԲԸ ԻՆՉՊԵՍ ԿՐՆԱՍ ՄՈՌՆԱԼ...»

Շարունակուած էջ 8-էն

«Հայը իր ցաւը չմոռցաւ», - ըսի գործակիցիս: - Բայց այդ ցաւին մէջէն հայը տքնեցաւ շինելու նորը՝ որպէս կեանքի շարունակականութիւն: Բայց այս նորին մէջ, հայը իր ցաւը պահանջեց եւ մինչեւ այսօր կը շարունակէ՝ վկայելով ճշմարտութիւնը եւ արդարութիւնը: Եւ նորը պէտք է հիմնել արդարութեան եւ ճշմարտութեան զբաւակնանքով վրայ», եղաւ իմ բացատրութիւնս:

Խոթցոն չմոռցաւ իր ցաւը... Եթէ ցաւը կը պատմէ, այդ կ'ընէ շինելու համար նորը: Նորը, որ

արդար է ու ճշմարիտ: Հայն ալ իր ցաւը չմոռցաւ: Եւ կ'ապրի այսօր արդար ու ճշմարիտ նորը ստեղծելու եւ նորին հասնելու տեսլականով: Բայց արդեօք ե՞րբ պիտի գայ այդ օրը, երբ աշխարհը պիտի գիտակցի, որ ցաւը պէտք է վերանայ մարդկային կեանքին մէջէն... Մինչ այդ երեւի ուրիշ ելք ու ճար չկայ: «Ցաւը ինչպէ՞ս կարելի է մոռնալ»... յիշելով եւ պահանջելով: Յիշելով ցաւը եւ պահանջելով, ու տակաւին տքնելով՝ շինելու նորը՝ արդարութեան եւ ճշմարտութեան տեսլականով:

ԸՆՏԱՆԻՔՆ ԱՍՈՒՐ Է, ԵԹԵ ԱՅՆՏԵՂ ԶԱՐԳԱՆԱԼՈՒ ՄԻՏՈՒՄ ԿԱՅ

Ամուր հիմերով ընտանիք ստեղծելու գլխավոր նախապայմաններն մէկը այն է, որ նոր կազմաւորուող այդ «համակարգը» բարենպաստ միջավայր ըլլայ անդամներէն իւրաքանչիւրի անձնական զարգացման համար: Յիշենք, որ ընտանիքը սերունդը շարունակելու գործիք չէ: Նման մտածողութեան արդիւնքն է, որ կը հանդիպինք համատեղ կեանքի այլաբան չչաջողած դէպքերու: Եթէ մտածենք ընտանիքի մասին կեանքի նոր փուլի անձնական զարգացման տեսանկիւնէն, միանգամայն պիտի առաջնորդուինք այլ սկզբունքներով՝ ընտանիք ստեղծելու ընթացքին:

Անկեղծօրէն հարցուցէք դուք ձեզի. «Իսկ այս մարդու հետ ընտանիք կազմելով՝ ի՞նչ զարգացում կ'ակնկալուի ինձմէ: Ան պատրաստ է յառաջընթացի իր կեանքին մէջ: Իսկ զիս կը հետաքրքրէ՞ զարգացման անոր ընտրած ուղին»: Եթէ ունիք երազանքներ եւ ծրագիրներ, որոնց իրականացումը կարեւոր է ձեզի համար եւ վտանգուած՝ նորաստեղծ ընտանիքի պարագային, հաւատացէք, որ ձեր միութիւնը արդէն ամուր հիմերու վրայ չէ. անբաւարարուա-

ծութիւնը օր մը գլուխ պիտի բարձրացնէ: Ի հարկէ, պիտի հարցնէք, թէ ուր մնաց սէրը այս դատողութիւններու կողքին: Զոյգերու մեծ մասը այդպէս ալ կը վարուի. կը սիրահարուին եւ կ'ամուսնանան, որովհետեւ «չեն կրնար ապրիլ առանց մէկը միւսին: Բայց շատ շուտով պարզ կը դառնայ, որ միայն սէրը քիչ է: Երիտասարդ ընտանիքը կը բախի կենցաղային խնդիրներու, կը մեծնան յաւակնութիւնները իրարու հանդէպ, եւ նոր միայն ի յայտ կու գան այն անհամատեղելիութիւնները, որոնք կը քողարկէր «սէր»ը: Ընտանիք պէտք է կազմել անոր հետ, որ կ'երթայ նոյն ուղղութեամբ, որով դուք կ'երթաք, ի դէպ՝ նոյն արագութեամբ:

Երբ ընտանիքը նպաստաւոր միջավայր կը դառնայ անձի անհատական զարգացման համար, կարելի կ'ըլլայ նաեւ «սիրել»ը, եւ չի ստեղծուի իրավիճակ, երբ «հոգիդ բան մը կ'ուզէ, բայց պարտադրուած է հաշտուելու եղածին հետ»: Ատիկա կը քայքայէ նախ մարդը, յետո՛յ՝ անխուսափելիօրէն նաեւ այն միջավայրը, որ «կը ճզմէ» զինք, այս պարագային՝ ընտանիքը:

ԻՆՉՊԵՄ ՅԱՂԹԱՅԱՐԵԼ ԱՍՉԿՈՏՈՒԹԻՒՆԸ

*Մտածեցէք դրական ուղղութեամբ - Տուեալ սկզբունքը հիմք կը հանդիսանայ մարդու մէջէն ամէկոտութիւնը արմատախիլ ընելու համար: Առանց ճիշդ տրամադրութեան, մենք ոչինչ կրնանք ընել: Իսկ գլխուն մէջ պէտք է հետեւեալ միտքը ըլլայ՝ «Իմ սխալներս ոչ մէկուն կը վերաբերին»: Այլ խօսքով՝ մի կառչիք սեփական անձի մասին շրջապատի կարծիքէն: Պարզ բան է՝ ոեւէ առողջ դատող մարդ կ'ուզէ դրական տպաւորութիւն ձգել անոնց վրայ, որոնց հետ սերտ կապերու մէջ է, ինչպէս նաեւ քիչ ծանօթ մարդոց վրայ: Բայց նոյնիսկ եթէ սխալած էք՝ որեւէ սխալ բան ըսած էք, անտեղի ծիծաղած էք, շտապելու ընթացքին սայթաքած էք եւ ինկած բոլորի աչքին առջեւ, ջանացէք իւրացնել պարզ ճշմարտութիւն մը. խոշոր հաշուով, ակամայ ակնատեսներու կողմէ ձեր տհաճութիւններուն մեծ ուշադրութիւնը, ինչպէս նաեւ աչքերուն մէջ հեզանքը եւ դժուարութեամբ զսպող ծիծաղը ընդամենը ձեր աշխոյժացած երեւակայութեան արդիւնքն են: Մենք այնքան անտարբեր աշխարհի մէջ կ'ապրինք, որ այսօր իւրաքանչիւրը կը մտածէ միայն ինքն իր եւ իր խնդիրներուն մասին: Այսինքն իզուր օտարներէն կը սպասէք օգնութիւն, կարեկցանք եւ նոյնիսկ չարախնդութիւն: Ի հարկէ, կան խառնուածքներ, որոնք չափէն շատ ունին վերջին «բարիքէն», բայց ի վերջոյ, ինչու պէտք է ձեզ անհանգստացնէ ոեւէ մէկուն կարծիքը: Ուրիշ կարծիքն կախեալութիւնը կ'արգելակէ մարդուն զարգացումը, անոր յառաջխաղացումը դէպի նպատակը, դէպի հասարակական եւ ասպարէզային աստիճան: Բացառութիւն կը կազմէ սոսկ հեղինակաւոր, յարգուած անձի կռուցողական քննադատութիւնը:

*Շփուելով՝ մարդուցէք - Այո, ինքնավստահութիւն մշակելը,

սեփական միտքերը հրապարակաչնօրէն յայտնելու կարողութիւնը՝ առանց կարմրելու եւ յուզումէն եւ ծայրաստիճան երկչոտութենէն ուշաթափութեան եզրին գտնուելու, հնարաւոր է միայն անվերջ շփման միջոցով: Ատիկա ըրէք ամէն տեղ, ուր որ կ'ուզէք. ինչպէս մէջ՝ վաճառողի հետ, անձնօթ անձերու հետ՝ հեռախօսով, սովորական մարդոց հետ՝ համացանցի ֆորումներու մէջ, սկիզբի համար՝ անանուն եղանակով:

*Կանոնաւորապէս «պտտեցէք» - այն մարդոց ընկերակցութեամբ, որոնց հետ յարմարաւէտ է, ուրախ եւ դիւրին, որոնց հետ դուք ձեզ կը զգաք ձեր արժանիքները, նոյնիսկ եթէ ատիկա ընդամենը երկու երեք մարդ է, նոյնիսկ եթէ անոնք ազգականներ կամ ընկերակցներ են: Բայց կ'արժէ ամէն օր զբաղիլ ատով, չծուլանալ, այդ պարագային արդիւնքները երկար սպասել չեն տար: Դուք ձեզ աւելի ինքնավստահ կը զգաք եւ կը կարենաք ձեր նոր հմտութիւնները փորձել իրական լարանի վրայ, առանց վախի, որ կ'արտայայտուի ցած հակուած աչքերով, մահացու գունատութեամբ եւ կարմրատակած այտերով:

*Կիրառեցէք շատ արդիւնաւէտ հնարք մը եւս, որ թոյլ պիտի տայ մոռնալ բնական ամէկոտութեան մասին՝ ոչ անմիջապէս, բայց աստիճանաբար եւ ընդմիջտ. պատկերացուցէք, թէ հանրային վայրի մէջ էք, լուսանկարչական սարքերու կիզակէտին: Պիտի տեսնէք, թէ ամէկոտութիւնը ինչ արագ պիտի վերանայ:

*Կատարելապէս զինուած եղէք - Ատիկա կը նշանակէ՝ նախապէս մտածել սեփական արտաքին տեսքին եւ ըսելիքին մասին, եթէ անհրաժեշտ է ոչ թէ ընդամենը այցելել խանութներ, այլ, օրինակ՝ որեւէ երեկոյթի կամ հանդէս գալ հանրային ձեռնարկի ժամանակ: Ընտրեցէք չէզոք գոյնի յարմարաւէտ հագուստ, որ

ՆԱՏԱԿԵԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԻՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԿՐՆԱՅ ՅԱՌԱՋԱՑՆԵԼ

Ժամանակակից աշխարհի մէջ դժուար է գտնել մէկը, որ գոնէ օրուան կէսը չ'անցնէ համակարգիչի կամ հեռատեսիլի առջեւ: Որոշ մասնագիտութիւններ կը ստիպեն վարել նստակ եաց կեանք, բան մը, որ զգալիօրէն կ'ազդէ մեր առողջական վիճակին վրայ:

Խօսքը միայն ողնայարի խնդիրներուն մասին չէ: Խնդիրը այն է, որ, երբ երկար ժամանակ նստած կը մնաք, մկաններուն ելեկտրական աշխոյժութիւնը կը նուազի, հետեւաբար՝ ջերմութի (calorie) այրման գործընթացը կը դանդաղի, այսպէս մենք մէկ վայրկեանի մէջ կ'այրենք ընդամենը մէկ քիլօ ջերմութ: Յ ժամ անց

անօթները կը նեղանան, բան մը, որ կ'ազդէ արեան շրջանառութեան վրայ: Եթէ օրը 24 ժամ անցնէք նստած վիճակի մէջ, ինսուլինը կը կորսնցնէ իր կարողութիւններուն 40%-ը, որ կը յանգեցնէ 2-րդ տիպի շաքարախտի յառաջացման վտանգի բարձրացման: 2 շաբաթ շարունակ, ամէն օր 6 ժամ համակարգիչի մօտ անցնելով՝ մարմինն մէջ կը բարձրացնէք վատ քրոնոթերով մակարդակը, որ կը խթանէ աւելորդ կշիռի կուտակումը: Երկար ժամանակ չէզոք կեանք վարելով՝ մկանները կը տկարանան, իսկ կշիռը կորսնցնելուն նպաստող մասնիկները կը պակսին:

ՁԵՐ ԴԵՄՔԻՆ ՁԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵ ՁԵՐ ՄԱՍԻՆ

Դէմքին ձեւը կրնայ բացայայտել անձի տեսակը, պատմել անոր կեանքի սկզբունքներուն մասին: Թէեւ մարդոց մեծամասնութիւնը ունի համադրուած դիմաձեւ, օրինակ, կլոր եւ քառակուսի համադրութիւն, այնուամենայնիւ, կան մարդիկ, որոնց դիմաձեւը յստակ կը հասկցուի:

Ուղղանկիւն դիմաձեւ: Այս դիմաձեւով մարդիկ ունին քառակուսի ճակատ եւ կզակ: Անոնք կը տարբերին նախանձելի տրամաբանութեամբ եւ շատ լաւ մտածողութեամբ, սակայն շատ ջանք կը գործադրեն իրենց մտորումներուն մէջ: Իբրեւ կանոն անոնք կը ծրագրեն քայլերը եւ հազուադէպ կը խօսին իրենց զգացումներուն մասին: Մշտապէս յառաջացող ներքին լարուածութիւնը հանելու համար անոնք կ'աշխատին ջանասիրաբար:

Կլոր դիմաձեւ: Այսպիսի դիմաձեւը կը բնորոշուի այտուկէն ներքեւ թմբիկի այտերով: Ատիկա ցոյց կու տայ, որ անձնաւորութիւնը բարի է, այլ մարդոց հետաքրքրութիւնները կը դասէ իր նախասիրութիւններէն վեր: Այդ պատճառով, այսպիսի մարդիկ սովորաբար կ'ենթարկուին ինքնահաւան եաստիներուն:

Աղամանդի ձեւ: Սուր ճակատ եւ քիթը շեղանկիւն կը ստեղծեն երկարաւուն այտուկերու օգնութեամբ: Այդպիսի մարդիկ կը սիրեն իրավիճակը

իրենց հսկողութեան տակ վերցնել: Անոնք կեղերոնացած են մանրութիւններու վրայ, ինչի շնորհիւ անոնք կ'ըլլան լաւ աշխատողներ: Յստակ են իրենց խօսքերուն մէջ եւ լաւ կապ կ'ունենան այլ մարդոց հետ:

Հաւկրթաձեւ դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին երկարաւուն դէմք: Անոնք գիտեն բոլոր ճիշդ բաներու մասին եւ կրնան ըսել այնպիսի բառեր, որոնք անպայման հաճելի կը թուին խօսակիցին: Անոնք կը տրամադրեն իրենք իրենց հանդէպ, սակայն շատ կեղերոնացած են անթերի երեւնալու ցանկութեան վրայ:

Քառակուսի դիմաձեւ: Ոչ մեծ դէմք՝ լայն ճակատով եւ կզակով: Այսպիսի մարդիկ շատ համբերատար են եւ լի խանդավառութեամբ:

Սրտանման դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին լայն ճակատ եւ նեղ կզակ: Անոնք ունին անհաւանական ներքին ուժ եւ շատ յամառ են: Այդ ներքին ուժը գանոնք կը տանի դէպի դրուած նպատակներու իրականացում: Անոնք ունին ուժեղ ներքին ձայն:

Տանձանման կամ եռանկիւն դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին նեղ ճակատ եւ լայն ներքին ծնօտ: Անոնք կ'ուզեն ըլլալ գլխավորը: Այս տեսակի մարդիկ շատ յաճախ յաջողակ կ'ըլլան: Հնարաւորութիւններու սահմաններուն մէջ լաւ ինքնավստահ ըլլալ:

Իմացութեամբ. շրջապատի մարդիկ պէտք է զգան ձեր բանիմացութիւնը եւ բարձր ինքնագնահատականը: Աւելի յաճախ ժպտացէք, բայց ոչ չափէն աւելի. եթէ ամէն անգամ ժպտով փոխարինէք պատասխանելու կամ պատմելու անհրաժեշտութիւնը, շրջապատողներուն մօտ այնպիսի տպաւորութիւն կը ձեւաւորուի, թէ դուք ի վիճակի չէք երկու բառ իրարու կապել: Մի լարուիք, ընդհակառակը, թուլցուցէք մկանները. այդպէս շփուելը անհամեմատ աւելի դիւրին պիտի ըլլայ:

*Շատ արդիւնաւէտ խորհուրդ է. եթէ պատմելու կարողութիւն չունիք, ձեր մէջ «միացուցէք» հարցազրուցավարը: Հաւատացէք, ատիկա ըստ արժանուրյն պիտի գնահատուի ձեր կողքին գտնուողներուն կողմէ: Ճիշդ է, կարելի չէ կորսնցնել չափի զգացումը. այնպիսի գործի մէջ, ինչպէս շփուել, պնդեթեութիւնը միայն վնաս կու տայ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

«Մանչեսթեր Եունայթեդն» Անակնկալի Բերեց «Չելսիին»



Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան 33-րդ տուրի կերպարանակա խաղում «Մանչեսթեր Եունայթեդն» ընդունեց Լոնտոնի «Չելսիին» եւ առաւելութեան հասավ 2:0 հաշուով:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը խաղը սկսել էր մանչեսթերցիներին փոխարինողների թւում, սակայն դա տանտէրերին չխանգարեց խփել արագ կող: Խաղի հաշիւը չորրորդ րոպէին բացեց անգլիացի յարձակուող Մարկուս Ռեշֆորդը, որը Անգլիայի ընթացիկ առաջնութիւնում խփեց «Մանչեսթեր Եունայթեդի» ամենարագ կողը: Ժողջ Մոուրինիոյի թիմն աչքի էր ընկնում վստահ պաշտպանութեամբ, իսկ հիւրերի գորհները վտանգաւոր չէին ստացուած: Երկրորդ խաղակէսի սկզբնամասում դաշտի տէրերը խփեցին նաեւ երկրորդ կողը, որը 49-րդ րոպէին իր անուան դիմաց գրանցեց իսպանացի կիսապաշտպան Անդեր Զեբերան: «Մանչեսթեր Եունայթեդը» յաղթական հաշիւը պահպանեց մինչեւ վերջ, իսկ Հենրիխ Մխիթարեանը մնաց պահեստայինների նստարանին:

Պրեմիեր լիգայի նախորդ 8 խաղերում «Մանչեսթեր Եունայթեդը» չէր կարողացել յաղթել «Չելսիին» (4 ոչ ոքի, 4 պարտութիւն):

Այս յաղթանակից յետոյ մանչեսթերցիները վաստակեցին 60 միաւոր եւ 4 միաւոր են հետ չորրորդ տեղում գտնուող «Մանչեսթեր Սիթիից», որը մէկ խաղ աւելի է անցկացրել: 75 միաւոր ունեցող «Չելսին» էլ երկրորդ տեղում գտնուող «Տոտենհեմից» առաջ է 4 միաւոր:

«Սպարտակը» Յաղթեց «Ձենիթին» Եւ Աւելի Սօսեցաւ Ախոյեանութեանը

Ֆուտպոլի Ռուսաստանի առաջնութեան 23-րդ տուրում «Սպարտակը» Մոսկուայում 2:1 հաշուով յաղթեց պետերբուրգեան «Ձենիթին»:

Այս յաղթանակից յետոյ «Սպարտակը» 10 միաւոր առաջ անցաւ երկրորդ տեղում գտնուող ԲԿՄԱ-ից, որից մէկ միաւոր հետ է լաւագոյն եռեակը եզրափակող «Ձենիթը»: Ռուսաստանի առաջնութեան աւարտին մնում է 7 տուր:

Իբրահիմովիչը Տարեկան 20 Միլիոն Եւրօ Եւ Պահանջել «Մանչեսթեր Եունայթեդից»

«Մանչեսթեր Եունայթեդի» շուկայարձակուող Չլատան Իբրահիմովիչը պատրաստ է եւս մէկ տարով երկարաձգել անգլիական ակումբի հետ գործող պայմանագիրը, որն աւարտուած է այս մրցաշրջանի վերջում:

The Mirror-ի համաձայն՝ 35-ամյա ֆուտպոլիստը կը կնքի նոր պայմանագիր, եթէ նրան առաջարկեն տարեկան 20 միլիոն եւրօ աշխատավարձ: Իբրահիմովիչն առաջարկներ ունի MLS-ից ու Չինաստանից: Այս մրցաշրջանում նա «Մանչեսթեր Եունայթեդի» կազմում անցկացրել է 44 հանդիպում, դարձել 28 կողի եւ 8 գոլային փոխանցման հեղինակ:



«Բարսելոնայի» Յաղթանակը, Մեսիի Դուբը

Սպանիայի առաջնութեան 32-րդ տուրի խաղում «Բարսելոնան» «Կամպ Նոու» ստադիոնում մրցեց «Ռեալ Մոսյեդադի» հետ եւ առաւելութեան հասաւ 3:2 հաշուով: Կատալոնական թիմի կազմում դուբլի հեղինակ դարձաւ արժեքիւնացի յարձակուող Լիոնել Մեսին, մէկ անգամ էլ աչքի ընկաւ սպանացի յարձակուող Պակո Ալկասերը:

«Բարսելոնան» ունի 72 միաւոր եւ երկրորդ տեղում է: Կատալոնական թիմը 3 միաւոր է գիջում մէկ հանդիպում քիչ անցկացրած «Ռեալին»:

Եւրոպայի Լիգայում Զենրիխ Մխիթարեանը՝ Շաբաթուայ Երրորդ Լաւագոյն Ֆուտպոլիստ

«Մանչեսթեր Եունայթեդի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը Ուեմբլ-ի կայքում անցկացուած քուէարկութեան արդիւնքում ճանաչուեց Եւրոպայի լիգայի 1/4 եզրափակիչի առաջին խաղերի երրորդ լաւագոյն ֆուտպոլիստ:



Հայաստանի

հաւաքականի աւագը ստացաւ ձայների 25 տոկոսը եւ գիջեց շաբաթուայ լաւագոյն խաղացող ճանաչուած Ռայան Բաբելին («Բեշիկթաշ», 34 տոկոս ձայն) ու Դեւի Կլասենին («Այաքս», 30 տոկոս ձայն): Չորրորդ տեղում յայտնուեց Վիգոյի «Սելտայի» իսպանացի յարձակուող Եագօ Ասպասը, որը հաւաքեց 10 տոկոս ձայն:

Յիշեցնենք, որ բելգիական «Անդերլեխտի» դէմ Եւրոպայի լիգայի 1/4 եզրափակիչի առաջին խաղում (1:1) Հենրիխ Մխիթարեանը 37-րդ րոպէին խփել էր անգլիական ակումբի միակ կողը: Նա մեկնարկային կազմում հանդէս էր եկել 90 րոպէ եւ Ուեմբլ-ի պաշտօնական կայքում անցկացուած քուէարկութեան արդիւնքում ճանաչուել էր նաեւ հանդիպման լաւագոյն ֆուտպոլիստ՝ ստանալով ձայների 60 տոկոսը: Հոլանդացի յարձակուող Ռուդ վան Նիստելրոյից յետոյ 28-ամեայ Մխիթարեանը «Մանչեսթեր Եունայթեդի» առաջին ֆուտպոլիստն է, որը եւրագաւաթներում կողի հեղինակ է դառնում 4-րդ արտագնայ խաղում անընդմէջ:

Լեւոն Արոնեանը Ոչ Ոքի Խաղաց Աշխարհի Ախոյեան Մագնուս Կարլսենի Զեռ

Գերմանիայում ընթացող շախմատային սուպերմրցաշարի երկրորդ տուրում Հայաստանի հաւաքականի առաջատար Լեւոն Արոնեանը սեւերով մրցեց աշխարհի խոյեան, նորվեգացի Մագնուս Կարլսենի հետ: Պարտիան 70-րդ քայլում աւարտուեց ոչ ոքի: Երկու գրոսմայստերներն էլ ունեն 1-ական միաւոր:



Միանձնեայ առաջատարը մրցաշարի միակ կին մասնակից, չինացի Հոու Յիֆանն է, որը երկու յաղթանակ է տարել մեկնարկում:

Երրորդ տուրում Լեւոն Արոնեանը սպիտակներով խաղաց ֆրանսիացի Մաքսիմ Վաշիշ Լագրաւի հետ ու հասաւ առաւելութեան:

Էլինա Դանիէլեանը Վստահ Յաղթեց Ատրպէյճանի Ներկայացուցչին

Գրոսմայստեր էլինա Դանիէլեանը 3-րդ յաղթանակը տարաւ Ռիգայում ընթացող շախմատի Եւրոպայի կանանց անհատական առաջնութիւնում:

Հայ շախմատիստուհին սպիտակներով մրցեց Ատրպէյճանը ներկայացնող Գիւնայ Մամադզադայի հետ: Էլինա Դանիէլեանը վստահ անցկացրեց ամբողջ պարտիան եւ գեղեցիկ յաղթանակ տարաւ:

Մէկ միաւոր վաստակեց նաեւ Լիլիթ Գալոյեանը, երբ սեւ խաղաքարերով պարտութեան մատնեց յոյն Եուլիա Մակային: Լիլիթ Մկրտիկեանը ոչ-ոքի խաղաց իսպանուհի Մոնիկա Գալսետայի հետ, իսկ Մարիա Գէորգեանը պարտուեց ռումինուհի Իրինա Բուլմագաչին:



Հինգ տուրից յետոյ էլինա Դանիէլեանն ունի 4 միաւոր եւ այժմ մի քանի մասնակիցների հետ բաժանում է 2-րդ տեղը: Միւս երեք հայ պատուիրակները վաստակել են 2,5-ական միաւոր եւ տեղեր են զբաղեցնում մրցաշարային աղիւսակի միջին մասում:

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՐԹԱՆՔ

Լոնտոնաբնակ հայ գաղութի ծանօթ ազգայիններէն Տիար Ասատուր Կիւզէլեան վերջերս ենթարկուած է վիրաբուժական յաջող գործողութեան մը: Այժմ տուն փոխադրուելով կը բոլորէ կազուրման շրջանը: Արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք իրեն: «Մասիս»

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



ԵՂԻԱ ՍԱԼԻՊԵԱՆԻ մահուան առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Ապրիլ 23, 2017 Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ յաւարտ Ս. Պատարագի: Խնդրողներ՝ Սալիպեան, Բարիքեան, Տիրամերեան եւ Serano ընտանիքներ եւ հարազատներ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



ԱԻԵՏԻՍ ՏԷՄԻՐՃԵԱՆԻ (Լիբանան) մահուան առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի 23 Ապրիլ, 2017ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ յաւարտ Ս. Պատարագի: Խնդրողներն են՝ Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժէլ Գազգեան Տէր եւ Տիկ. Շահան եւ Շուշիկ Օհաննէսեան եւ համայն Տէմիրճեան Գազգեան ընտանիքներ եւ հարազատներ: Հոգեճաշ պիտի մատուցուի Տէր եւ Տիկ. Շահան եւ Շուշիկ Օհաննէսեաններու բնակարանը, 1328 Doverwood Drive, Glendale, CA 91207:

Առաջնորդ Սրբազան Հօր Պատգամը

Շարունակուած էջ 6-էն

ներով, որոնք բոլորն ալ պէտք է ապահովեն քրիստոնեայի մէջ նկարագիրը, եւ մեր Սուրբ Եկեղեցւոյ, ազգի ու Հայրենիքի առաքելութեան ամրագրումը:

Կեւապրինք նոր աշխարհի մը մէջ, եւ ամէն օր ու վայրկեան նոր մարտահրաւէրներու առջեւ կը գտնուինք: Գիտութեան եւ տեխնոլոգիայի զարգացումը մեզի չի կրնար որեւէ ձեւով պարտադրել որդեգրելու բարոյական նոր մօտեցումներ, որոնք հակոտնեայ են քրիստոնէական վարդապետութեան եւ այն հաւատքին, որոնք եղան հիմքերը մեր նախնեաց հոգեւոր կեանքին:

Աշխարհի խաղաղութիւնը, մարդկանց բարձր ու ստեղծագործական կեանքը պայմանաւորուած է Աստուած եւ մարդ յարաբերութեան մշտականութեամբ: Հաւատքով կը պայմանաւորուի նաեւ ընտանեկան սրբութեան սահմանումը՝ բարոյական գերագոյն յաղթանակը:

Զատիկուան խորհուրդը առա-

ւելագոյնս կ'իմաստաւորուի, երբ քրիստոնեայ ընտանիքը Քրիստոսի Յարութեան խորհուրդը կ'արտայայտէ գործնական քայլերով:

Քրիստոս Յարեալ է մեռելոց: Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Քրիստոսի Յարութեան խորհուրդը հրաւէրն է նոր կեանքի, որպէսզի մեր հոգեւոր էութեան մէջ մշտապէս կրենք Աստուծոյ ներկայութիւնը, մեր քրիստոնէական ինքնութիւնն ամուր պահպանելու ոգին, հայրենասիրական շունչը, համամարդկային արժէքներու հանդէպ գիտակցութիւնը, ազգային շունչը, ծառայութեան զգացողութիւնը, ի մասնաւորի՝ հայ ընտանիքի սրբութեան տեսիլքը: Այս բոլորին մատակարարն է Եկեղեցին, որուն ապրող ու շնչող մասնիկներն ենք: Այս պատկերը կը տեսնենք Քրիստոսի Յարութեան խորհուրդին մէջ:

Յարութեան խորհուրդը աւելն է նոր կեանքի:

Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Յովնան Արքեպիսկոպոս Տէրտրեան

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Մ.ի ֆուլթայլի խումբին վերջին յաջողութիւններուն առթիւ մի ոմն՝ \$100 կը նուիրէ Հ.Մ.Մ.ին: \$100 կը նուիրէ «Մասիս»ին:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս

Շարունակուած էջ 6-էն

Թեան ու առաջընթացի պայքարում: Արդ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, բոլորս՝ պաշտօնեայ, աշխատաւոր, գինուոր, ձեռնարկատէր, մտաւորական, հոգեւորական, նորոգած մեր մէջ քրիստոնէական ոգին՝ ամրապնդուած յոյսով քայլենք այն ճանապարհով, ապրենք այն ճշմարտութեամբ, ընդունենք այն կեանքը, որ Քրիստոսն է՝ յարուցեալ մեր Տէրը, որպէսզի գրոյ յիշատակի արժանի գործերով պայծառակերպուի ազգիս կեանքը ի սփիւռս աշխարհի եւ լցուի աստուածային պարգեւներով եւ երկնային օրհնութեամբ: Եւ մենք քաջալեր մեր Տիրոջ պարգեւած փրկութեան հաւատով եւ սոգորուած բարի գործոց ջերմ եռանդով՝ առաքեալի հետ վստահութեամբ ասենք. «Եւ մենք

ձշմարտի՝ Նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի մէջ ենք. որովհետեւ Նա՛ է ճշմարիտ Աստուած եւ յաւիտեական կեանք» (Ա Յովհ. Ե 20):

Աղօթում ենք եւ հայց բարձրացնում առ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, որ հրաշափառ իր Յարութեան շնորհները լուսաւորեն մարդկութեան կեանքը, խաղաղութիւն տիրի ողջ աշխարհում, խաղաղութիւն հաստատուի մեր հայրենի սահմաններում: Աղօթում ենք, որ մեր ժողովրդի հաւատաւոր գործերի բարի արդիւնքներով հզօրանայ մեր հայրենիքը, միշտ պայծառ լինի մեր Սուրբ Եկեղեցին եւ աշխարհասփիւռ ազգս հաստատուն ընթացքով առաջնորդուի դէպի փրկութիւն ու յաւիտեանութիւն՝ այսօր եւ միշտ. ամէն:

Քրիստոս յարեալ է մեռելոց Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

Յարուցեալ Քրիստոսը Եւ Յարուցեալները

Շարունակուած էջ 6-էն

(Գաղ. 2. 20):

դէպք մը ուրանալ, կրնան կրօնական վարդապետութիւն մը հերքել, բայց անձնական փորձառութիւն մը անուրանալի եւ անհերքելի է:

Քրիստոսի աշակերտները հաւատացին ոչ միայն անոր համար որ իրենք յարուցեալ Յիսուսը տեսան, անոր հետ սեղան նստան եւ կերակուր կերան, անոր հետ քայլեցին եւ անոր ֆիզիքական ներկայութիւնը վայելեցին, այլ նաեւ անոր հոգեւոր ներկայութիւնը իրենց համար ամէնօրեայ փորձառութիւն դարձաւ: Պօղոս Առաքեալ Յիսուսի յարութեան ականատես չըլլալով հանդերձ յարութեան գորութիւնը զգացէր էր իր կեանքին մէջ, եւ կրցած էր ըսել, «ես չէ որ կ'ապրիմ, այլ Քրիստոս է որ կ'ապրի իմ մէջս»

Այդ փորձառութիւնը դարեր շարունակ քանիցս կրկնուած է մարդոց կեանքին մէջ որոնք, իրենց կարգին, Քրիստոսի յարութեան գորութիւնը զգացած են իրենց կեանքին մէջ. իրենց կեանքը յեղաշրջուած է եւ իրենց հոգին նորոգուած: Յարուցեալ Քրիստոսը յարուցած է զանոնք եւ նոր կեանք տուած է անոնց: Անոնք իրենց մեղքերու գերեզմանէն յարութիւն առնելով, կրցած են իրենց կեանքով ու կենցաղով վկայել թէ՛ Քրիստոս յարութիւն առած է եւ յաղթական Տէր է:

Քրիստոս յարեալ է մեռելոց, Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի: Վեր. Դոկտ. Վահան Յ. Թուրքիեան Գործադիր Տնօրէն Հայ Աւետ. Համաշխարհային Խորհուրդի

Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Յեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:

Vahe Atchabahian

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104

Tel: 626-354-5924

vamedia@yahoo.com



MARCH FOR JUSTICE

ARMENIAN GENOCIDE

Արդարութեան
Քայլարշակ

Pan Pacific
Park

Genesee Ave.



Turkish
Consulate

Wilshire Blvd.

Fairfax ave.

3rd St.

April 24 @ 12 PM

START: 7600 Beverly Blvd.
Մեկնում Los Angeles

march4justice.com

Buses leave at 11:30AM from:

Հանրակարգեր մեկնում են 11:30ին

Glendale

St Mary's Church 500 S. Central Ave.
St Gregory Catholic Church 1510 E. Mountain Ave.
Armenian Nazarene Church 411 E. Acacia Ave.

Burbank

St Leon's Cathedral 3325 N. Glenoaks Blvd

La Crescenta

Crescenta Valley Community Center 2633 Honolulu Ave.
Crescenta Valley Church 6252 Honolulu Ave.

Pasadena

St Gregory Armenian Church 2215 E. Colorado Blvd.
AGBU High School 2495 E. Mountain St
Pasadena Armenian Center 2242 E. Foothill Blvd.

Montebello

Holy Cross Cathedral 900 W. Lincoln Ave.

Hollywood

St Garabed Church 1614 N. Alexandria Ave.

North Hollywood

Merdinian School 13330 Riverside Dr.

Encino

Holy Martyrs School 16617 Parthenia St
Holy Martyrs Church 5300 White Oak Ave

Canoga Park/Van Nuys

AGBU Marie Manoogian School 6844 Oakdale Ave.
St Peter's Armenian Church 17231 Sherman Way

Bus reservations and more information / Փոխադրամիջոց ապահովել և հաւելեալ տեղեկութիւն



888-924-1915

